

**Հայաստանի Հանրապետությունում թվային ռադիոհեռուստատեսության հեռարձակման
իրականացման ծրագրի նախագծի վերլուծություն**
Դոկտոր Կեթրին Նիման-Մեթկալֆ
Հոկտեմբեր 5, 2006թ.

Գործադիր ամփոփագիր

Թվային հեռարձակման ներդրման հետ կապված են մի շարք առանցքային հարցեր: Այս զեկույցը հերթականությամբ ուսումնասիրում է այդ հարցերը և մատնանշում է մտահոգություններն ու հարցադրումները՝ հիմնվելով եվրոպական լավագույն փորձի վրա:

- Բնակչության համար հեռարձակման մատչելիության հետ կապված սոցիալ-տնտեսական հարցեր.

Հայաստանի ծրագիրը փորձում է խնդրին մոտենալ քաղաքացու տեսանկյունից, այն ավելի շատ առնչվում է բնակչության ծածկույթի, քան տարածքի ծածկույթի հարցերին և շեշտադրում է բնակչության ծածկույթի անհավասարությունների վերացումն ու տեղեկատվության մատչելիության ավելացումը: Որոշ մասերում ծրագիրը պետք է ավելի հստակ բացատրի, թե ինչպես է սա կատարվելու: Թվային միջավայրում մատչելիության ապահովման գործում նույնպես պետք է շեշտադրել անկախ կարգավորիչ մարմնի դերը: Տեղեկատվական այլ ծառայությունների առաքման համար թվայնացման օգտագործման հնարավորությունը պլանում ավելի շատ պետք է ուսումնասիրվի: Ավելին, էական է, որ լինեն հստակ և արդարացի կանոններ, թե ովքեր կարող են ստանալ անվճար հեռուստատեսային բաժանորդագրային սարքեր, քանի որ հավանական է, որ սոցիալական նպաստների այլ համատեքստում օգտագործված չափանիշները կարող են տեղին չլինել: Այս ամենի հետ կապված կլինեն վարչական աշխատանքներ և ծախսեր, որոնք պետք է հաշվի առնել: Կարևոր է, որ թվայնացման ժամանակ մարդիկ մատչելիությունից չզրկվեն, և հետևաբար ողջամիտ աջակցություն պետք է տրվի: Ինչ վերաբերում է ծրագրերի մատչելիությանը, ապա այն հեռարձակողների ընտրությունը, որոնք պետք է կազմեն մուլտիպլեքսների մի մասը, հատկապես սոցիալական փաթեթը, պետք է լինի թափանցիկ և բաց: Հանրային ծառայությունների հեռարձակողի հիմնական դերը՝ որպես այս փաթեթի մի մաս, մնում է: Սպառողների պաշտպանության խնդիրները պետք է լինեն պահանջվող օրենսդրական ուսումնասիրության մի մասը:

- Ենթակառուցվածքի զարգացումը պետք է ներառի հեռարձակողների ներդրումների ծախսերը և ծախսերի ֆինանսավորման պետական ներգրավվածության միջոցները.

Թվայնացման նախնական ներդրումային ծախսերը բարձր են և վերադարձելիությունը կարող է միայն ավելի ուշ փուլում լինել: Այսպիսով, սովորաբար պահանջվում է պետական որոշ ֆինանսավորում և այն նախատեսված է ծրագրում: Սկզբունքորեն մասնավոր և պետական խառը ներդրումները լավ են, բայց մասնավոր ընկերությունների համար ներդրումային խթանները շատ պարզ չեն: Պետք է լինի զգուշավոր հավասարակշռություն, որպեսզի որոշ ընկերությունների անտեղի նախապատվություն չտրվի: Շուկայի մենաշնորհացումից նույնպես պետք է խուսափել՝ լինեն դրանք պետական կամ մասնավոր ընկերություններ: Տեխնիկական մասնագրումները և ստանդարտները պետք է հնարավորինս լինեն եվրոպայում և միջազգայնորեն ընդունվածները՝ ապահովելու ամենամեծ հնարավոր փոխկապակցվածությունը և ապրանքների ազատ տեղաշարժի հնարավորությունը: Հաղորդիչ ցանցի սեփականաշնորհումը թվայնացման պատճառով չպետք է ուշանա և հաղորդիչ ցանցի ցանկացած սեփականատեր պետք է պահպանի մատչելիության կանոնները, ինչպես նաև ազդեցություն չունենա հեռարձակման բովանդակության վրա կամ թե որ ալիքները պետք է հեռարձակվեն: Երբ հնարավոր է գործող ենթակառուցվածքը պետք է օգտագործվի և

արդիականացվի, որպեսզի նվազեցվի շրջակա միջավայրի ազդեցությունը:

- Հաճախականության խնդիրներ.

Թվային հեռուստատեսությունը հեռարձակվում է նույն հաճախություններով, ինչ որ անալոգայինը: Այսպիսով, այնպիսի երկրներում ինչպիսին Հայաստանն է, որտեղ ազատ հաճախականություններ չկան, պետք է վերանշանակում տեղի ունենա, որպեսզի թվային հեռարձակումը կարողանա սկսվել՝ ներառյալ որոշ անալոգային հեռարձակումների անջատումը: Ծրագիրը սա նախատեսում է և հաճախականությունների պլանավորման համար հղում է կատարում համապատասխան ITU դրույթներին: Ստահագությունն այն է, թե ինչպես է կատարվելու անցումը, որպեսզի չխախտվեն գործող իրավունքները և օրինականացվեն հեռարձակողների ակնկալիքները, որի առումով ծրագիրն անորոշ է: Անհրաժեշտություն կա ապահովելու, որ սպեկտրի չհեռարձակվող օգտագործողները (ներառյալ զինվորական և նմանատիպ օգտագործողները) վերածրագրավորման ժամանակ հաշվի առնվեն: Չհեռարձակող ծառայությունների գործող օգտագործողները և պոտենցիալ նոր օգտագործողները նույնպես պետք է հաշվի առնվեն ծրագրում:

- Շուկայի, փոխկապակցվածության և մատչելիության մենաշնորհացումի ռիսկը՝ քանի որ պետական ներգրավվածությունը կարող է անհրաժեշտ լինել, հաշվի առնելով պահանջվող ներդրումների ծավալը, և քանի որ ցանկացած պարագայում թվայնացման վաղ փուլերում գործառնության մրցակցության ապահովումը դժվար է, ապա սեփականության իրավունքները պետք է զգուշորեն կիրառվեն: ՋԼՍ-ների սեփականության սահմանափակումներն ու դրա հետ կապված հայտարարագրման կանոնները շատ կարևոր են և մի բան, որը Հայաստանում պետք է ամրապնդվի, բայց ծրագրում դրա մասին նշված չէ: Ենթակառուցվածքի մատչելիության դրույթները շատ կարևոր են և պետք է համապատասխան կերպով կիրառվեն անկախ կարգավորիչ մարմնի կողմից՝ հնարավոր առավելագույն մրցակցություն ապահովելու համար, նույնիսկ եթե ենթակառուցվածքի կարողությունը սահմանափակ է: Մատչելիության ժամկետների և պայմանների թափանցիկությունը պետք է ապահովվի: Սա մի բան է, որ Հայաստանի ծրագիրը պետք է շեշտադրի: Անկախ կարգավորիչը պետք է համապատասխան իրավասություններ ստանա և կարևոր է, որ կարգավորիչ մարմնի աշխատանքը լինի օբյեկտիվ, թափանցիկ, համամասնական և ոչ խտրական: Ցանցի օպերատորի, ինչպես նաև բովանդակություն ապահովող հեռարձակողների ընտրությունը սկսելու լավագույն եղանակը կլինի բաց մրցույթը:

- Կարգավորիչ հարցեր՝

Ծրագրի թուլությունն այն է, որ այն բավարար կամ հստակ կերպով չի անդրադառնում կարգավորիչ և անկախ կարգավորիչ(ների) շատ կարևոր դերի հարցերին: Կարգավորիչը (ները) պետք է ներգրավված լինեն ծրագրի մշակման մեջ: Սա ներառում է հեռահաղորդակցության և հեռարձակման կարգավորիչներին, քանի որ այն վերաբերում է և՛ փոխանցմանը, և՛ բովանդակությանը: Անկախ կարգավորիչները պետք է որոշեն թվային հեռարձակման, ինչպես նաև հեռարձակման այլ ձևերի և այլ հաղորդակցությունների փոխանցման և բովանդակության լիցենզավորման հարցերը: Թվային լիցենզավորման լիցենզիաները պետք է ներառեն առանձին մասեր կամ պետք է բաժանված լինեն երկու մասի փոխանցման և ծառայության/բովանդակության համար: Կարգավորիչ աշխատանքի համար իրավական հստակությունը կարևոր տարր է: Պայմանների փոփոխությունները, ինչպես նաև տրված լիազորությունների անվավեր ճանաչումը միշտ պետք է կատարվի օբյեկտիվորեն հիմնավորված եղանակով և համամասնորեն: Հաղորդակցության մասին օրենքները պետք է ներառեն թվայնացման անհրաժեշտ դրույթները օրենքների փոփոխությունների կամ առանձին օրենքների տեսքով՝ թողելով նույնը հիմնական հեռահաղորդակցության իրավական հարցերը՝ ներառելով հեռարձակման ստանդարտների դրույթները:

- Հանրային ծառայության հեռարձակողի դերը՝

Լավ հեռարձակման բազմազանությունն ու մատչելիությունը թվայնացման միջոցով մեխանիկորեն տեղի չեն ունենում, բայց պետք է ապահովվեն: Սա նշանակում է, որ

սոցիալական փաթեթի ծրագրերի ապահովման գործում հանրային ծառայության հեռարձակողի դերը շատ կարևոր է և հանրային ծառայության հեռարձակողը պետք է անկախ լինի, ինչպես նաև իր դերն իրականացնելու համար բավարար ռեսուրսներ ունենա:

- Հանրային մասնակցությունը թվայնացման պլանավորման մեջ՝
Թվայնացումը հեռարձակման մեծ փոփոխություն է և բխում է սպառողների/դիտողների, ինչպես նաև ոլորտի շահերից: Կանոնների սահմանման՝ ներառյալ ռազմավարության մշակման գործում առավելագույն հանրային մասնակցությունը կարևոր է: Կարող է լինել թվայնացմամբ, ներառյալ տեղեկատվության սփռումը, զբաղվող հատուկ մարմնի անհրաժեշտություն:

1. Ներածություն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը պատրաստել է թվային ռադիոհեռուստատեսային հեռարձակման իրականացման ծրագիր, որը պետք է ընդունվի որպես կառավարության որոշում (այսուհետ՝ «ծրագիր»): Ծրագիրը բացատրում է հեռարձակման ներկայիս վիճակը Հայաստանում, համեմատում է իրավիճակը որոշ այլ եվրոպական երկրների հետ և առաջարկություններ է ներկայացնում, թե ինչպես պետք է ներդնել թվային հեռարձակումը Հայաստանում: Ծրագիրը ներառում է նաև նախահաշվարկները: Ներկա վերլուծությունը մեկնաբանում է ծրագիրը նաև թվային հեռարձակման ներդրման լավագույն եվրոպական փորձի տեսանկյունից: Միջազգային կամ եվրոպական իրավունքում ոչ մի պարտադրող կանոններ չկան, թե ինչպես պետք է ներդրվի թվային ռադիոհեռուստատեսությունը (բացի հաճախության և նման որոշ հարցերից, որոնք կարող են պարտադիր լինել ITU համակարգում), բայց յուրաքանչյուր երկիր կարող է ինքը որոշել ժամանակացույցն ու մեթոդը: Եվրամիության (ԵՄ) անդամ պետությունների համար ԵՄ առաջարկել է, որ թվայնացումն իրականացվի մինչև 2010-2012թթ.: Միջազգային այս իրավական վիճակը նշանակում է, որ վերլուծությունը դիտարկում է ծրագիրը այն բանի տեսանկյունից, թե ինչն է համապատասխան՝ հիմնվելով տարբեր առաջարկությունների, միջազգային մարմինների աշխատանքի, հեռարձակման ընդհանուր իրավունքի և այլ պետությունների, քան կոնկրետ կանոնների որևէ խմբի վրա:

Սա ծրագրի, բայց ոչ Հայաստանի հեռարձակման կամ հաղորդակցության օրենսդրության վերլուծությունն է: Այսպիսի իրավական վերլուծությունը սույն զեկույցի շրջանակներից դուրս է: Վերլուծության շրջանակներում տեխնիկական հարցերի վերաբերյալ մանրամասն մեկնաբանություններ չեն արվում: Այն չի անդրադառնում նախահաշվարկներին, քանի որ այն կպահանջի Հայաստանի գների մակարդակի ավելի խորը վերլուծություն, որը նույնպես դուրս է այս վերլուծություն շրջանակից: Վերլուծությունը հիմնված է ծրագրի անգլերեն թարգմանության վրա, որը փորձագետին տրամադրվել է ԵԱՀԿ-ի կողմից 2006թ. սեպտեմբերի վերջին:

Գոյություն ունեն մի շարք առանցքային հարցեր՝ կապված թվային հեռարձակման ներդրման հետ: Դրանցից են՝

- բնակչության համար հեռարձակման մատչելիության հետ կապված սոցիալ-տնտեսական հարցեր,
- ենթակառուցվածքի զարգացում՝ ներառյալ հեռարձակողների ներդրումների ծախսերը և ծախսերի ֆինանսավորման պետական ներգրավածության միջոցները,
- հաճախականության հարցեր,
- շուկայի, փոխկապակցվածության և մատչելիության մենաշնորհացումի ռիսկը,
- կարգավորիչ հարցեր,
- հանրային ծառայության հեռարձակողի դերը,
- թվայնացման պլանավորման հանրային մասնակցությունը:

Այս վերլուծությունը զբաղվում է այս առանցքային հարցերով՝ մեկնաբանելով ծրագիրը լավագույն եվրոպական փորձի տեսանկյունից, ինչպես նաև բարձրացնելով որոշակի հարցեր: Կից ներկայացված է ծրագիրը տեքստում որոշ հակիրճ մեկնաբանություններով՝ լուսաբանելով նշված տարբեր առանցքային հարցերի հետ կապված խնդիրները: Վերջապես ներկայացված է օգտակար նյութերի մի փոքր ցանկ:

Ծրագիրը առաջին հերթին վերաբերում է թվային հեռուստատեսությանը և հետո հակիրճ կերպով թվային ռադիոյին՝ հաշվի առնելով, որ շատ հարցեր նման են և որ ընդհանուր առմամբ թվային հեռուստատեսության բաշխիչ սարքը դիտվում է որպես հասարակության համար ավելի մեծ ազդեցություն ունեցող: Ավելին, հաճախ երկուսը ներկայացված են որպես մի փաթեթ: Թեմայի մեկնաբանները հաճախ հետևում են այս մոտեցմանը: Այս զեկույցում նույնպես շատ մեկնաբանություններ վերաբերում են և՛

հեռուստատեսությամբ, և՛ ռադիոյին: Սակայն, պետք է նշել, որ թվային ռադիոն ունի հեռուստատեսությունից տարբերվող խնդիրներ, ինչպես օրինակ այն, որ անալոգային ռադիոընդունիչները հաճախ ավելի էժան են, մարդիկ դրանցից շատ ունեն և քիչ հետաքրքրություն կա ավելի քան թվայինների հանդեպ: Մարդկանց շրջանում նույնիսկ ավելի քիչ հետաքրքրություն կա թվային ռադիոյի հանդեպ, քանի որ անալոգային ռադիոն առաջարկում է լայն ընտրություն: Սպեկտրի ազատումը թվային ռադիոյի միջոցով նույնպես պակաս կարևոր է: Ռադիոյին յուրահատուկ որոշ հարցեր կարող են հետազայում պլանավորման աշխատանքի ժամանակ տեղին դառնալ:

Ընդհանուր ժամանակացույցը, ինչպես ներկայացված է բաժին II.10 և կից աղյուսակներում թվում է իրատեսական, թեև բավական լարված՝ հաշվի առնելով Հայաստանի տնտեսական իրավիճակը և համեմատած այլ երկրների փորձի հետ: Սակայն բարդ է տալ սրա հստակ գնահատականը, քանի որ Եվրոպայում գոյություն ունեն թվայնացման շատ տարբեր ժամանակացույցեր: ԵՄ արտահայտվել է, որ նույնիսկ ԵՄ անդամ երկրների միջև չափից քիչ համակարգում կա: Առ այսօր փորձը սովորաբար եղել է ուշացումների տարբերակը, բայց քանի որ այդ ընթացքում որոշ երկրներ կավարտեն անցումը և ցանկացած պարագայում արդեն կան և նույնիսկ ավելի շատ հետևելու օրինակներ կլինեն, պետք է հնարավոր լինի ավելի խիստ ժամանակացույցներ սահմանել այն երկրների համար, որոնք, ինչպես Հայաստանը, փոփոխությունը նախաձեռնել են մի փոքր ավելի ուշ:

2. Բնակչության հեռարձակման մատչելիության հետ կապված սոցիալ-տնտեսական հարցերը

Թվային հեռարձակման հիմնական օգուտներից մեկը հեռարձակման ալիքների ավելացումն է: Թվային հեռարձակման միավորների մասին իր առաջարկություններում Եվրոպայի Խորհուրդը մատնանշում է, որ անկախ և ինքնուրույն բազմապիսի ՁԼՍ-ների առկայությունը կարևոր է ժողովրդավարական հասարակությունների համար¹: Եվրոպայի Խորհուրդը ուշադրությունը հղում է ՁԼՍ-ների տարակարծության մասին իր առաջարկություններին և շեշտադրում է հանրային հեռարձակման կարևորությունը: Առաջարկությունը պարզորոշ կերպով ընդգծում է, որ քաղաքացու տեսանկյունը պետք է հաշվի առնվի թվայնացման դիտարկման ժամանակ՝ ապահովելու տնտեսական և այլ շահերի միջև պահանջվող հավասարակշռությունը՝ խուսափելու ժողովրդավարական և սոցիալական անբավարարությունից:

Հայաստանի ծրագրում փորձ է կատարվում հաշվի առնել քաղաքացու տեսանկյունը, ինչպես պահանջվում է Եվրոպայի Խորհրդի կողմից: Ծրագիրը մանրամասն նկարագրում է հեռարձակման բնակչության ծածկույթը, որը ցույց է տալիս, որ թվային պլանավորման համար անհրաժեշտ տեղեկատվությունը գոյություն ունի: Թվում է, որ տեղեկատվությունը մանրամասն է և բավարարում է բնակչության, քան թե տարածքի ծածկույթի պահանջին: Որպես առանցքային հարց ծրագիրը նշում է բնակչության ծածկույթի անհավասարությունների վերացումն ու մարդկանց համար տեղեկատվության մատչելիության ավելացումը հավասար եղանակով (II.4): Սա շատ լավ նպատակ է և ծրագիրը պետք է ավելի հստակ բացատրի, թե ինչպես է սա տեղի ունենալու: Թվային միջավայրում մատչելիության ապահովման գործում անկախ կարգավորիչ մարմնի դերը պետք է շեշտադրվի: Թվային հեռարձակման մեկ այլ օգուտ է, ի լրումն ալիքների բազմազանության հնարավորության, բնակչությանը այլ տեսակի տեղեկատվության սփռման հնարավորությունը՝ տեխնոլոգիաների համադրման միջոցով: Ծրագրում նշված է բնակչությանը լրացուցիչ ծառայությունների տրամադրումը (II.4), բայց շատ քիչ բան է ասված այսպիսի այլ ծառայությունների մասին և դրանց լրացուցիչ օգուտների մասին:

Ծրագիրը սահմանում է (II.11), որ այն կվերացնի հեռարձակման մատչելիության

¹ Եվրոպայի Խորհրդի Անդամ Պետությունների Նախարարների առաջարկություն R (2003)9 թվային հեռարձակման ժողովրդավարական և սոցիալական ներդրման խթանման միջոցառումների մասին:

ուղորտում գոյություն ունեցող անհավասարությունները և պայմաններ կստեղծի տեղեկատվության ամբողջ ազատության իրագործման համար: Սա առանձին է այնպիսի օգուտներից, ինչպիսիք են արդիականացումը, ներդրումների պահանջի բարելավումը և այլ եվրոպական պետությունների հետ համադրելի ցանցային զարգացման ձեռքբերում: Կարևոր է հաշվի առնել, որ տեղեկատվության մատչելիության և անհավասարությունների նվազեցման օգուտները ավտոմատ կերպով և պարզապես ալիքների բազմազանության միջոցով տեղի չեն ունենում, կարևոր է որ լինի իրական բազմազանություն: Սա պետք է մտքում պահել, երբ որոշում է կայացվում հեռարձակման մուլտիպլեքսների բովանդակության (որ ալիքները) մասին:

Թվային հեռարձակման անցումը սովորաբար ենթադրում է ալիքների անվճար ընդունման և վճարովի ծառայությունների խառնուրդի տարբերակը՝ տրամադրելով որոշ սուբսիդիաների հնարավորություն, որպեսզի պահանջվող սարքերը (արկղերը) անվճար ընդունեն հեռարձակումը: Այն եվրոպական երկրների փորձը, որոնք վաղ են սկսել թվային վճարովի հեռուստատեսության ծրագրերը այն գաղափարով, որ անվճար ծառայությունները կարող են «անվճար երթևեկել» վճարովի ուղորտի զարգացման վրա, լուրջ խնդիրների առջև են կանգնել: Սպառողների հետաքրքրության, գործող վճարովի արբանյակային հեռուստատեսության կամ այլ ծառայությունների մրցակցության բացակայությունը նշանակել է, որ վաղ փորձերում ներգրավված ընկերությունները (Իսպանիայում և ՄԹ-ում) սննկացել են: Հայկական ծրագիրը հետևում է եվրոպայի ներկայիս մոդելին, որը մի քանի մուլտիպլեքսների զարգացումն է, ներառյալ ծրի ընդունման փաթեթը և այլ վճարովի փաթեթների ընտրություն, որոնք պետք է աստիճանաբար զարգանան: Թվայնացման խնդիրն է խուսափել տեղեկատվության մատչելիության բնագավառում աճող անհավասարությունից, որը գոյություն ունի վճարովի ալիքների բաժանորդների և այլոց միջև՝ իրականում սահմանափակելով հեռարձակման մատչելիությունը բնակչության մեծ սեգմենտների համար, փոխանակ հնարավորություն տալու օգտվելու թվային հեռուստատեսությամբ առաջարկվող ավելի շատ ընտրությունից: Անվճար ալիքների սոցիալական փաթեթի ստեղծումը, ինչպես նաև բարձր սահմանված սարքերի աջակցության հարցը, ծրագրում ճշգրիտ են սահմանված՝ այս պոտենցիալ խնդրով զբաղվելու համար:

Ծրագիրն առաջարկում է մի շարք անվճար ալիքներ՝ որպես սոցիալական փաթեթի մի մաս: Առաջարկվող ալիքների քանակը չորսից հինգ է, հանրային հեռարձակումը և որոշ ալիքներ, որոնք կիրականացնեն հանրային հեռարձակման գործառույթները (II.3): Այս առումով «հանրային հեռարձակման գործառույթների» իմաստը պարզ չէ: Ենթադրաբար այն նշանակում է, որ սոցիալական փաթեթը կներառի ալիքների բազմազանություն՝ բավարարելով հեռարձակման տարբեր կարիքները, հենց սա պետք է լինի նպատակը: Պետք է լինի տարակարծություն և ոչ պարզապես բազմազանություն: Անվճար փաթեթի ալիքների քանակը տարբեր երկրներում տարբեր է: Շատ երկրներում ի լրումն գործող հանրային ծառայությունների հեռարձակման ալիքների և այլ ալիքների, որոնք ազատորեն մատչելի են, թվայնացումից հետո հանրությանը որոշ լրացուցիչ անվճար ալիքներ են առաջարկվում: Սա կարող է լինել 24-ժամյա լուրեր (օրինակ՝ Ֆինլանդիայում և Շվեդիայում) կամ նմանատիպ, որոնց հանրային ծառայության բնույթը պարզ է: Անվճար մուլտիպլեքսի ալիքների քանակը, որն առաջարկվում է ծրագրով, համապատասխանում է միջազգային ստանդարտներին՝ հաշվի առնելով, որ ալիքների ընտրությունը կատարվել է բավարարելու հանրային հետաքրքրությունը և որ ծրի ալիքների քանակը առանց պատճառի չի սահմանափակվում²: Ինչպես նաև հետագա մուլտիպլեքսները պետք է ներառեն բազմազան ալիքներ և ընտրությունը լավագույնս պետք է կատարվի անկախ կարգավորչի կողմից՝ հիմնված օբյեկտիվ և թափանցիկ չափանիշների վրա:

Եվրոպայում և այլ տեղերում ընդունված են ռադիոհեռարձակման ցանցերի պարտադիր պարտականությունները, օրինակ՝ մալուխային ցանցերի համար և սկզբունքորեն

² Միացյալ Թագավորության պես մեծ երկրում անվճար ընդունման ալիքները կարող են հասնել մինչև 30 ալիքի, մինչդեռ Շվեդիայում այն վեց է, իսկ Ֆինլանդիայում հինգ՝ գումարած ռադիո:

ընդունված է ԵՄ Համընդհանուր ծառայության դիրեկտիվայում³: Համամասնական պարտականություններ կարելի է սահմանել ցանկացած հանրային հեռարձակողի համար, մալուխային, արբանյակային և ցամաքային հաշվի առնելով պետական քաղաքականության լեգիտիմ շահերը: Ալիքների պարտականությունները պետք է լինեն համամասնական, ինչպես նաև թափանցիկ և պարբերաբար ենթարկվեն վերանայման: Թվային հեռարձակման պարագայում պետք է կիրառվեն նմանատիպ դիտարկումներ: Ծրագիրը շատ բան չի ասում այսպիսի պարտականությունների և դրանց պայմանների վերաբերյալ, բայց հնարավոր է պլանավորման հետագա փուլերում սրանց ավելի շատ ուշադրություն դարձվի, երբ զարգանան վճարովի մուլտիպլիքսները, այն համատեքստում, ինչում որ արտահայտված են Համընդհանուր ծառայության դիրեկտիվայի սկզբունքները՝ որպես ուղեցույց⁴:

Այն երկրները, որոնք ավելի վաղ կանցնեն թվային հեռուստատեսության, ինչպիսիք են՝ Ֆինլանդիան և Շվեդիան, սովորաբար սուբսիդիաներ կամ ծրի ընդունող սարքեր չեն տալիս թվային հեռուստատեսություն ընդունելու համար: Ոչ այդքան հարուստ երկրում, ինչպիսին Հայաստանն է, անհրաժեշտ է աջակցություն տրամադրել բնակչության որոշակի խավին՝ կանխարգելելու, որ թվայնացումը բնակչության մեծ հատվածին չզրկի հեռարձակում ստանալու հնարավորությունից: Ծրագիրը դրույթներ է սահմանում այսպիսի աջակցության համար: Աջակցությունը պետք է ներառի խոցելի սոցիալական խմբերին և որոշ հաշմանդամների: Ձրի ստացող սարքերի իրավունքի սահմանման չափանիշները խնդրահարույց են լինելու, քանի որ կարելի կլինի ենթադրել, որ այսպիսի աջակցություն ստանալու համար մեծ պահանջարկ է լինելու: Այլ սոցիալական նպաստների տրամադրման համար օգտագործվող չափանիշները անպայման չէ, որ այս համատեքստում կիրառելի կլինեն: Միևնույն ժամանակ էական է, որ օգտագործվող չափանիշները լինեն թափանցիկ, օբյեկտիվ և ոչ խտրական: Այն բանի որոշումը, թե ով իրավունք ունի աջակցություն ստանալ, կպահանջի վարչարարություն և ծախսեր, որը պետք է հաշվարկված լինի ծրագրում:

Կարևոր է, որ անալոգայինը չանջատվի՝ նախքան թվայինի գրեթե համընդհանուր ներթափանցումը: Սրա մասին նշված է ծրագրում, բայց կարևոր է, որ այս նպատակը միշտ պահպանվի, որպեսզի անջատման անսաթվերը փոխվեն, եթե առաջընթացը լինի այլ, քան նախատեսվում էր:

Հեռարձակման մատչելիության ապահովման մեկ այլ ոլորտ է սպառողների պաշտպանությունը: Սա վերաբերում է սարքավորումներին, օպերատորներին փոփոխելու հնարավորությանը և չպետք է կիրառվեն բաժանորդագրման ոչ ողջամիտ պայմաններ և նմանատիպ այլ բաներ: Սպառողի իրավունքների պաշտպանության հարցերը ծրագրում նշված չեն: Սա պետք է կազմի օրենսդրական ուսումնասիրության մի մասը, որը պահանջվում է, որպես պլանի հաջորդ քայլ, և՛ հեռահաղորդակցության ու/կամ հեռարձակման օրենքում, և՛ սպառողների իրավունքների պաշտպանության օրենքում: Ողջամիտ պայմանագրային պայմանների սահմանումը և այս առումով օպերատորներին ներկայացվելիք պահանջները նման պետք է լինեն եվրոպական հեռահաղորդակցության օրենքների ստանդարտներին, քանի որ այս առումով թվային հեռարձակումը ավելի շատ նմանություն է ցուցաբերում հեռահաղորդակցության ոլորտի հետ⁵:

3. Ենթակառուցվածքների զարգացում և ներդրումներ

³ Դիրեկտիվա 2002/22/EC:

⁴ Որպես օրինակ, Ֆրանսիայի Պետական խորհրդում քննարկումներ ծավալվեցին 2002թ. Ֆրանսիայում այս առումով պարտավորությունների օրինականության վերաբերյալ որոշման մասին՝ գալով այն եզրակացության, որ սովորաբար այսպիսի պարտավորությունները օրինական են, քանի որ դրանք ծառայում են հանրային շահին, մույնիսկ եթե դրանք նշանակում են սպասարկման մատակարարի ազատ ընտրության սահմանափակում:

⁵ Համընդհանուր ծառայությունների դիրեկտիվայի հավելվածը, Դիրեկտիվա 2002/22/EC, ապահովում է եվրամիությունում սպառողական թվային հեռուստատեսային սարքավորումների համադրելիությունը:

Ի լրումն թվային հեռարձակման մատչելիության հարցի, ենթակառուցվածքի կառուցման, և ով ու ինչպես պետք է վճարի դրա համար, հարցերը նույնպես խնդրահարույց են թվային հեռարձակման անցում կատարող ցանկացած պետության համար: Ծրագրում նշվում է կառավարության, հեռուստատեսության և ռադիոընկերությունների, ցանցային օպերատորների և ոլորտի միջև գործընկերությունը (II.6), բայց պարզ չէ, թե այս գործընկերության համար ինչ խթաններ և սահմանափակումներ կան: Գոյություն չունի ընդհանուր եվրոպական մոդել, բայց յուրաքանչյուր երկիր պետք է գտնի իր լավագույն ուղին, սա ներառում է թե ինչպես կարելի է խրախուսել ոլորտը և մասնավոր հեռարձակողներին՝ ներդրումներ կատարելու առանց միևնույն ժամանակ ոչ տեղին նախապատվություններ տալու: Ծրագրում նշված տնտեսական և վարչական խթանները մնում են չսահմանված: Կարելի է սա հետագայում անել ավելի մանրամասն, բայց այն պետք է հստակորեն նշվի նաև այս սկզբնական ծրագրում:

ԵՄ-ը, Եվրոպայի Խորհուրդը և այլ կազմակերպությունները սովորաբար կոչ են անում արագ անցում կատարել անալոգայինից թվայինին, քանի որ զուգահեռ հեռարձակման արժեքը բարձր է: Սա պետք է կատարվի՝ եթե կա բավարար թվային ծածկույթ: Հանրության, ինչպես նաև հեռարձակողների հետաքրքրությունը պետք է հաշվի առնվի: Ծրագիրը միտված է բավական արագ անցում կատարելու և այնտեղ ներկայացված են պահանջվող պայմանները, որոնք պետք է հաշվի առնվեն, ինչը հետևաբար համահունչ է եվրոպական ստանդարտներին: Այն փաստը, որ Հայաստանը չունի մալուխային կամ արբանյակային մեծ ներթափանցում, կպահանջի հեռուստատեսային բաժանորդային կցորդ: Հնարավոր է, որ այս իրավիճակը փոխվի, քանի որ բարդ կլինի ընկերություններին կամ մարդկանց հետաքրքրել անցում կատարելու մալուխային համակարգի, երբ ցանկացած պարագայում թվայնացումը կփոխի շուկան⁶: Ոլորտը կարող է և պետք է խրախուսել, որպեսզի տրամադրվեն տարբեր տեսակի դեկոդավորման միջոցներ՝ ցածր գներով: Սրա առումով ծրագրում ոչ մի բան նշված չէ, միայն աջակցություն կարիքավորներին: Չնայած, որ կառավարություն չպետք է միջամտի /արդյունաբերության/ ոլորտում, այն կարող է երկխոսություն ունենալ և ավելի էժան կցորդների հնարավորությունն ուսումնասիրել: Ստանդարտները պետք է լինեն այնպիսին, որոնք հնարավորություն կտան մրցակցության համար տարբեր տեսակների օգտագործում: Տեխնիկական մասնագրումներն ու ստանդարտները պետք է առավելագույնս համապատասխանեն եվրոպականներին և միջազգայիններին՝ ապահովելու ամենամեծ հնարավոր փոխկապակցվածությունը և ապրանքների ազատ տեղաշարժման հնարավորությունը, քանի որ համագործակցություն կծավալվի միջազգային ընկերությունների հետ (II.9): ԵՄ այն կարծիքին է, որ ստանդարտները պետք է առավելագույնս առաջնորդված լինեն արդյունաբերությամբ: Հայաստանի համար կարևոր է չսահմանափակվել ստանդարտներով, եթե չկա տեխնոլոգիական զարգացում, այլ լինել ճկուն, տարբեր համակարգի միջև փոխկապակցման համար բաց և օգտագործողների համար լավագույնը:

Թվային հեռարձակման ներդրման ենթակառուցվածքների ներդրումները կարևորագույն խնդիր կլինեն և ծրագրում մի քիչ պարզ չէ, թե ինչ խթաններ կան պատասխանատու օպերատորների ներդրումների համար (II.7): «Անցման կազմակերպման» պետության դերը բավական անորոշ է: Ծախսերի և ներդրումների պատրաստակամության հաշվարկման ժամանակ պետք է հաշվի առնել, որ նախնական ծախսերը բարձր են: Ավելացված գրավչությունն ու թվային հեռարձակման ներդրումների ներուժը գալիս են միայն որոշ ժամանակ անց և ծախսերից հետո: Առավելությունները կնյութականացվեն ավելի ուշ, ինչպես նշված է ծրագրում (II.6), բայց այսպիսի առավելությունների ժամանակն ու չափը հայտնի չեն և խնդիրը չափազանց նոր է՝ ճշգրիտ համեմատություններ անելու համար: Ծրագրում ներառված չեն անցում կատարելու համար պահանջվող հեռարձակողների բոլոր ծախսերը: Սա ողջամիտ է, բայց պետք է

⁶ Գերմանիան նախատեսում է արագ անցում անալոգից: Սա հնարավոր կլինի, քանի որ Գերմանիայում լայնածավալ անալոգային համակարգ գոյություն չունի (93% մալուխային և արբանյակային ծածկույթ):

հաշվի առնել, որ որոշ խթաններ կարող են պահանջվու, որպեսզի նրանք ցանկանան ներդրումներ կատարել: 11.3-ում նշվածը առ այն , որ սպասելով մինչև որ թվային շուկան դառնա վճարունակ, ընկերությունները պետք է եկամուտներ ստանան գովազդից, հաշվի չի առնում գովազդի շուկայի իրականությունը: Եվրոպայում գովազդի եկամուտներն ընդհանուր առմամբ նվազել են և երբ գոյություն ունի ցածր ներթափանցում, ինչպես նաև լսարանի ֆրագմենտացիա, շուկան դառնում է բավական ոչ գրավիչ, որը նշանակում է, որ թվայնացումը կարող է նշանակել պակաս եկամուտ գովազդից: Մասնավոր հեռարձակողների համար գովազդից գումար ստանալու հնարավորության սահմանափակումից զատ, որպեսզի մասնավոր հեռարձակողների համար ավելի վատ պայմաններ չստեղծվեն, սա կարող է նաև հետևանքներ ունենալ հեռարձակման օրենսդրության համար, ինչպիսիք են հանրային հեռարձակողի գովազդի իրավունքը, որպեսզի շուկան ավելի շատ չխախտվի:

Չնայած որ, թվայնացումից կարող են օգուտ ստանալ տարբեր կողմեր, ինչպիսիք են՝ նոր հեռարձակողները, որոնք կարող են մատչելի սպեկտրից օգտվելու հնարավորություն ստանալ, սարքավորումների արտադրողները, այլ ծառայությունների մատակարարները և այլն, հնարավոր է, որ սրանք չլինեն նախնական ծախսերի կրողները: Ինչպես հեռահաղորդակցության ազատականացման մեջ, ծախսերը կրողները որոշակի առումով դա անում են նրա համար, որպեսզի այլոք կարողանան մրցել նրանց հետ: Բնականաբար սա շեշտադրում է կատարում մրցակցային իշխանությունների վրա, որոնք պետք է փորձեն որոշել համագործակցության թույլատվության և հատուկ իրավունքների տրամադրման միջև լավագույն հավասարակշռումը: Կենտրոնացման և համագործակցության պես մրցակցային հարցերը, եթե որոշակի կենտրոնացումը կարող է հանգեցնել գերիշխանության, որը կարող է չարաշահվել, պետք է հաշվի առնեն հատուկ կարիքները, ինչպիսիք են լրջագույն ներդրումները ենթակառուցվածքներում: Կարող է հնարավոր լինել, որ որոշ կենտրոնացումներ ընկերության սննկացման կանխարգելման միակ ուղին լինի⁷: Մատչելիության կանոնները չափազանց կարևոր են, բայց պետք է ընդունել, որ այս կանոնները կարող են հզորացնել ցանցն ունեցող մեկի իշխանությունը, եթե այն սահմանափակում է այլ ցանցերի զարգացումը: Ցանցի օպերատորը հաճախ պետական կամ նախկին պետական մարմին է, որը դոմինանտ է, բայց թվայնացումը չպետք է դիտարկվի, որպես այս մարմնի գերիշխանության ամրապնդում: Այն չպետք է աջակցի նաև այսպիսի պետական ձեռնարկությունների սեփականաշնորհմանը: Հեռահաղորդակցության ազատականացման փորձերը կարող են օգտակար լինել ուսումնասիրման համար, քանի որ հարցերը նման են: Հեռահաղորդակցության կարգավորիչ մարմնի ներգրավածությունը կարևոր է:

Այսպիսով, թվայնացման համար կարող են պահանջվել պետական ֆինանսավորում ու կառավարության երաշխավորված ներդրումներ, բայց սա պետք է զգուշորեն կատարվի, որպեսզի մի օպերատորի չդնի նպաստավոր դիրքում և խախտի պետական աջակցության ու մրցակցության այլ հարցերը: ԵՄ հետաքննում է, թե արդյոք թվայնացման որոշ ֆինանսավորում չի խախտում պետական աջակցության դրույթները, որը մատնանշում է, որ եվրոպական կարծիքն այն է, որ թվայնացումը արդարացում չէ այլ կանոններով գործելու համար⁸: Նաև հեռարձակման ոլորտի մասնավորեցումը պետք է նախորդի և թվայնացումը չպետք է օգտագործվի, որպես արդարացում՝ պետական մեծ ներգրավվածության համար: Շատ երկրներում հեռարձակման փոխանցման ցանցն առանձնացվել է հեռարձակողից, ինչպես նաև սեփականաշնորհվել է, որը սովորաբար դրական է: Սա թվայնացումից առանձին հարց է և չպետք է թույլ տալ, որ թվայնացումը ուշացնի այս զարգացումները: Փոխանցման ցանցի հնարավոր պետական սեփականությունից անկախ՝ մատչելիության դրույթները պետք է խստորեն կիրառվեին և փոխանցման սեփականությունը երբեք չպետք է նշանակի միջամտություն հեռարձակման բովանդակության մեջ կամ հեռարձակման ալիքների որոշման մեջ: Սա անկախ

⁷ Տես առաջին ատյանի եվրոպական դատարանի գործ T-158/00 քննարկումները:

⁸ 2005թ. հանձնաժողովի հետաքննությունները Բեռլին-Բրանդենբուրգում և Շվեդիայում փոխանցման ցանցի օգտագործման պայմանների վերաբերյալ:

կարգավորիչ մարմնի կարգավորման խնդիր է: Հանրային հեռարձակողը մասնավոր հեռարձակողների պես պետք է պաշտպանված լինի պետական միջամտությունից:

Ծրագիրը մանրամասն նկարագրում է ենթակառուցվածքները՝ նկարագրելով ներկայումս գոյություն ունեցող ենթակառուցվածքները և բնակչության ծածկույթը: Որպես հիմք սա շատ կարևոր տեղեկատվություն է՝ որոշելու, թե ինչ ներդրումներ են պահանջվում: Կարելի է տեսնել, որ անկասկած ներդրումներ են պահանջվելու, քանի որ ներկայիս համակարգը պետք է նորացվի, նույնիսկ եթե այն կարող է որոշակի առումով օգտագործվել: Այս մոտեցումը ճիշտ է՝ գործող ենթակառուցվածքը հնարավորինս օգտագործելու համար: Շրջակա միջավայրի ազդեցությունը, ընդհանուր դիմադրությունը (շատ նոր կայմեր և այլն), ինչպես նաև նոր տեղադրումների ծախսերը պետք է հաշվի առնվեն և օգտագործվեն այն, ինչ ողջամիտ է, ինչպես արվում է արդիականացման փուլերում: Թափանցիկությունն ու հանրության համար մատչելիության գործընթացները, ապահովելու, որ բոլոր համապատասխան կարծիքները հաշվի են առնված, պետք է կիրառվեն, երբ քննարկվում են ենթակառուցվածքների տեղադրման ուղղությունների իրավունքները⁹: Պետք է խրախուսել համատեղադրումն ու շենքային պայմանների միացյալ օգտագործման տարբերակները:

Անցման տարբեր տարբերակներ են նշված և սա մի ոլորտ է, որտեղ հանրային կանոնների սահմանումը տեղին է: Շատ մեկնաբաններ գտնում են, որ թվային հեռուստատեսության համար ցամաքային ցանցը լավագույն է՝ փոխլրացված արբանյակային կողմից: Ցամաքային ցանցը մեծ ծավալով արդեն գոյություն ունի, քանի որ գործող ենթակառուցվածքը կարող է օգտագործվել և միայն ցամաքային ենթակառուցվածքները կարող են օգտակար կերպով ընդունվել շարժական ընդունիչներով: Սակայն բրոդբանդի միջոցով հեռուստատեսությունը հետաքրքիր տեխնոլոգիա է, սրա համար պետք է առնվազն նշված լինեին ծրագրում՝ այս առումով պահելով հետագա աշխատանքների հնարավորությունը:

Նշվեց, որ ցանցային օպերատորները պետք է լիցենզիա ստանան՝ կաբելային հեռուստատեսություն սփռելու համար և որ այս օպերատորները կվերակառուցեն կոլեկտիվ ընդունման համակարգեր (II.7): Պարզ չէ, թե արդյոք գոյություն ունի մրցակցություն այսպիսի օպերատորների միջև և արդյոք նրանք հետաքրքրված կլինեն նշված համակարգերի կառուցման մեջ, քանի որ ներկայիս մալուխային տարածվածությունը թույլ է: Որոշ համատեքստերում նշվել է, որ լիցենզավորման գործող համակարգը պետք է փոխվի, այստեղ թվում է, որ գործող համակարգը պետք է օգտագործվի:

4. Հաճախականության հարցեր

Թվայնացման օգուտներից մեկն այն է, որ հաճախականության ավելի քիչ տարածք է պահանջվում, ավելի շատ ալիքներ կարող են տեղավորվել նույն սպեկտրի մեջ: Սակայն սկզբնական փուլում սպեկտրի անհրաժեշտություն կա, որը հաճախ մատչելի չէ առանց այլ ծառայությունները փակելու: Կապուղին նույնն է, ինչ որ անալոգային հեռարձակման պարագայում, որը պատճառներից մեկն է (հեռարձակողների ծախսերից նույնպես առանձին), որ զուգահեռ հեռարձակումը չպետք է չափից երկար տևի: Շատ երկրներում հաճախականությունների պլանավորումը բարդ է, հատկապես, երբ ազատ հաճախականություններ չկան: Նշված է, որ Հայաստանում իրավիճակն այսպիսին է (II.4): Հետևաբար անհրաժեշտ է անջատել անալոգայինները՝ թվայինի ներդրումից առաջ: Ծրագրում գնահատված է պահանջվող ռադիոհաճախականության սպեկտրը (II.8) և հղում է կատարված ITU կանոններին և ծրագրերին: 2006թ. ITU հաճախականություններ է հատկացրել թվային հեռարձակման համար հաճախականությունների փոփոխված ծրագրերում: Այս առումով Հայաստանը պետք է հետևի ITU ծրագրերին և թվում է, որ այն

⁹ Սրա մասին տես հանրային խորհրդակցությունների մասին ստորև բերված հատվածում:

կատարում է ITU իր պարտականությունները: Տարբեր օգտագործման հատկացումը որոշվում է ITU կողմից, բայց տարբեր օգտագործողների նշանակումը ներքին խնդիր է: Գիշտ նշվել են համապարփակ ծրագրերը՝ հաշվի առնելով վերահատկացումը և վերանշանակումը: Նշված կարևոր հարցերից մեկն այն է, որ ուշադրություն պետք է դարձնել չհեռարձակող կազմակերպություններին և դրանց օգտագործվող սպեկտրին: Մեկ այլ խնդիր, որը շատ չի նշվել ծրագրում, տեխնոլոգիաների համադրման հարցն է, որը նշանակում է, որ այլ նոր օգտագործողներ հետաքրքրված կլինեն նույն սպեկտրով, ինչ որ թվային հեռարձակողները: Ավելին, հեռարձակումը կարող է հնարավորություններ բացել այլ ծառայություններից օգտվելու համար: Ծրագրում սա նշվում է, բայց առանց շատ քննարկումների:

Որպես Հայաստանին յուրահատուկ առանձնահատկություն ծրագիրը շեշտադրում է, որ մեծ սպեկտր վերցված է, օրինակ ռազմական օգտագործողների կողմից: Պետք է ուսումնասիրել, թե արդյոք այսպիսի մեծ օգտագործումն անհրաժեշտ է և այսպիսի օգտագործումը պետք է ներդաշնակեցվի քաղաքացիական օգտագործման համար: Կարևոր է, որ ջանքեր ներդրվեն՝ թվայնացման վաղ փուլերում ներառելու այնպիսի համապատասխան գործընկերների, ինչպիսին է Պաշտպանության նախարարությունը, որպեսզի ազատ լրացուցիչ հաճախականության տարածք, հատկապես թվային փորձարկման անհրաժեշտության ժամանակ: Հեռարձակման հաճախականության սպեկտրի ազատականացման (համադրման) միջոցառումները պետք է ներառեն հաճախականության օգտագործման հետ կապված բոլոր հարցերի համապարփակ ուսումնասիրությունը: Ծրագիրն ընդունում է անցման հաճախականության հետևանքները և հաճախականության սպեկտրի վերածրագրավորելու անհրաժեշտությունը (II.7 և այլն): Երևանում հաճախականության հատկացման այն բարդությունները, որոնք կանխատեսված են, պետք է հանձնվեն այնպիսի ձևով, որպեսզի ապահովվեն, որ լիցենզիայի գործող օգտագործողները չհամարեն, որ իրենց հաճախականությունները կանայականորեն ետ են վերցվել կամ խանգարվել են: Նշված մանրամասն վերլուծությունը պետք է նաև լուծումներ նախապատրաստի:

Հաճախականությունների կառավարման ոլորտում առանցքային հարցն անկասկած այն է, թե ինչպես անել փոխանցումը, ավելի կոնկրետ, ինչ է տեղի ունենում գործող հեռարձակողների հետ: Սկզբունքորեն անալոգայինների համար նոր լիցենզիաների տրամադրման մորատորիան լավն է, բայց կարող են առաջանալ այնպիսի այլ հարցեր, ինչպիսիք են գործող հեռարձակողների ցանկությունը՝ ծածկույթն ընդլայնելու կամ չափանիշները փոխելու համար: Այսպիսի փոփոխությունների համար երկար ժամանակում բարդ է ընդհանուր բլոկ պահել, որը կարող է ապագայում անապահով լինել՝ չիմանալով, թե երբ և ինչպես է վերջնականապես տեղի ունենալու թվայնացումը: Ի հայտ են գալիս լավ կառավարման լեգիտիմ ակնկալիքներն ու սկզբունքները: Եթե ինչ-որ մեկն ունի լիցենզիա և ինչ-ինչ պատճառներով չի կարող դրա օգուտներից օգտվել, զրկելով դրա փոփոխության հնարավորությունից, ապա նրա իրավունքները կարող են ոտնահարվել: Ծրագրում պահանջվում է ավելի ուշադիր կարգավորիչ աշխատանք և ավելի տեսանելի ներդրում անկախ կարգավորիչ մարմնի կողմից:

Ինչպես բոլոր հաճախականությունների պլանավորման ժամանակ, հաճախականությունների բազմակողմանի ծրագրեր կպահանջվեն՝ խուսափելու միջամտության ռիսկից: ITU կանոններն ու ընթացակարգերը միշտ պետք է պահպանվեն, բայց պետք է նկատել, որ ITU պահանջում է համագործակցություն հարևան երկրների հետ: Այս ոլորտը բացակայում է պլանի տեխնիկական և այլ մասերում: Նշված է, որ ստացվում են ռուսական ալիքներ (ենթադրաբար Ռուսաստանից), բայց սրա մասին քննարկում չկա:

5. Շուկայի, փոխկապակցվածության և մատչելիության մենաշնորհագումի ռիսկը

Ձարգացած թվայնացված հեռարձակման շուկայում հեռուստադիտողները նման են սպառողների ավանդական առումով: Հեռարձակումը կարող է ավելի շատ կապվել հեռուստադիտողների ավելի շատ ընտրության և բազմազանության պահանջարկի հետ: Միևնույն ժամանակ գոյություն ունի նաև մենաշնորհացման վտանգը, եթե ծառայությունների մի սպասարկողը գերիշխող դիրք է ստանում: Այլոց համար մուտքի արգելքները բավական բարձր կլինեն ենթակառուցվածքների պատճառով, ինչպես նաև սպառողները կապված կլինեն կոնկրետ հեռարձակողի՝ տեխնիկական միջոցների, պայմանագրային դրույթների կամ ծրագրային նախապատվությունների միջոցով: Կարգավորիչները պետք է սահմանեն այն իրավիճակները, երբ թվային հեռարձակումը կարող է հանգեցնել հակամրցակցային մենաշնորհային իրավիճակները, որը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում, քանի որ սովորաբար անհրաժեշտ է խթանել կամ որոշակի դրդապատճառներ սահմանել, որպեսզի սկսվի թվային հեռարձակումը և չխեղդել նորամուծությունը: Եթե արդեն կան մենաշնորհի և գերիշխանության խնդիրներ, ապա սա կարելի է ավելացնել թվայնացումով և սա նշանակում է, որ թվայնացումից անկախ գոյություն ունեցող այսպիսի հարցերը պետք է լուծվեն և պետք է ուշադիր լինել, թվայնացման միջոցով այսպիսի խնդիրներ չստեղծելու համար: ՁԼՄ-ների կենտրոնացման սահմանափակումը թվային ոլորտում դառնում է ավելի տեղին և սրա դեմ պայքարի օրենսդրությունը առավել կարևոր է: Չնայած ընդունված է, որ հեշտ լուծումներ չկան, ծրագիրը բավարար կերպով ցույց չի տալիս այս խնդրի ընկալման խորությունը և չի քննարկում, թե ինչպես է պետք դրանից խուսափել: Մրցակցության խթանումը նշված է ծրագրում (II.5), բայց այնտեղ շատ բան չի ասվում, թե ինչպես է պետք սա անել և այն սկսելու համար գերիշխանություն չի տալիս մեկ դերակատարի: Համաձայն 2006թ. հուլիսի՝ «ՁԼՄ-ների ազատության իրավիճակը Հայաստանում» ԵԱՀԿ գեկույցի, Հայաստանի օրենսդրությունը սեփականատիրոջ հայտարարագրման մասին բավարար չէ, ինչը նշանակում է որ ՁԼՄ-ների սեփականության թափանցիկության պակաս կա: Ի լրումն՝ հեռարձակվող ՁԼՄ-ներում իրական տարակարծության պակաս կա: Հաշվի առնելով սա՝ կարևոր է, որ թվային հեռարձակման ներդրումը ավելի չբարդացնի պատկերը: Հեռարձակման ոլորտի նշված խնդիրներին պետք է անդրադառնալ թվայնացման ծրագրերի հետ զուգահեռ:

Ծրագիրը նախատեսում է սկսել պետական ծառայությունների հեռարձակումից և հետագայում, երբ անցումն արդեն ավարտված է, մասնավոր հեռուստաընկերությունները կարող են մրցակցել հավասար պայմաններով (II.3): Սա լավ նպատակ է, բայց բարդ է սրան հասնել, երբ շուկան որոշ ժամանակ մնում է սահմանափակ և անվճարունակ և երբ մեկ օպերատորի թույլ է տրվում գերիշխել: Ծրագրում բացակայում է շրջանային և տեղական ծառայությունների խրախուսումը, ինչպես նաև անդրսահմանային միջազգային համագործակցության ծրագրերը:

Ինչպես նշում է ԵՄ¹⁰, պետական քաղաքականության միջամտությունները պետք է լինեն թափանցիկ, հիմնավորված, համամասնական և ժամանակին նվազագույնին հասցնեն շուկայի խափանման ռիսկերը: Ծրագրում պետական ներգրավածության թափանցիկությունը, ինչպես նաև հիմնավորումը հստակ չեն: Ծրագիրն ընդունում է պետության և մասնավոր հատվածի միջև համագործակցությունը, բայց թվում է, որ պետական միջամտության մեծ լիազորություններ են վերապահված: ԵՄ շեշտադրված հստակ նպատակները օգնում են սահմանելու պետական միջամտության հիմնավորումը, որը ծրագրում բավական հստակ չէ, բայց ենթադրվում է, որ այսպիսի նպատակները կհստակեցվեն ծրագրավորման շարունակական աշխատանքում, որն իր սկզբում է:

Ցանցի օպերատորի, ինչպես նաև բովանդակություն տրամադրող հեռարձակողների ընտրության կատարման լավագույն եղանակը սովորաբար կլինի բաց մրցույթի միջոցով՝

¹⁰ COM(2003)541 վերջնական:

հրավիրելով առաջարկներ երկու տարրերից¹¹: Ծառայությունների մատակարարողի մեկ ցանցից ավելին ունենալ մրցակցության տեսանկյունից ավելի լավ է, բայց սրան բարդ կլինի հասնել, հատկապես փոքր երկրում և այն կարող է տարբեր պատճառներով տեղին չլինել (ենթակառուցվածքների չափից շատ տեղադրումներ և այլն): Մատչելիության դրույթները պետք է ապահովեն, որ այն փաստը, որ գոյություն ունի ցանցի ընդհամենը մեկ օպերատոր, պրոբլեմներ չի առաջացնում: Միևնույն ժամանակ, եթե քաջալերվի մրցակցությունը ապա սա տեղի կունենա: Թվայնացման ռազմավարության առանցքային տարրերից մեկը կլինի օպերատորների միջև համագործակցության խթանումը և համադրելիության ապահովումը: Այս մասը Հայաստանի ծրագրում թույլ է: ԵՄ ունի համադրելիության մասին կանոններ և նույնիսկ եթե Հայաստանը ԵՄ անդամ չէ, միևնույն է սա կարող է ծառայել, որպես ժամանակակից սկզբունքների օրինակ¹²:

Ծրագրից պարզվում է, որ Հայաստանում փոխանցողների մեծ մասը պետական են՝ միայն մի փոքր մասնավոր փոխանցողների չափաբաժնով: Ծրագրի մտահոգություններից մեկը պետական սեփականության գերիշխանությունն է և շուկայում մեկ «խաղացողի» առկայությունը: ԵՄ-ում սրա վերաբերյալ գոյություն ունեն կանոններ, որոնք կարելի է օգտագործել նաև ոչ ԵՄ անդամների համար՝ ցույց տալով այն սկզբունքները, թե ինչպես է հնարավոր ապահովել մատչելիությունն՝ ապահովելու մրցակցությունը նույնիսկ այն ոլորտներում, որտեղ գոյություն ունի ենթակառուցվածքների գերիշխանությունը: Ծրագրում այս խնդիրները շատ նշված չեն և անհրաժեշտ է մի հստակ ընկալում, թե ինչպես է հնարավոր պայքարել մեկ խաղացողի գերիշխանության և շուկայի մենաշնորհացման դեմ՝ թե՛ փոխանցման, և թե՛ բովանդակության առումով: Այսպիսի հարցը և պոտենցիալ խնդիրը հատուկ է ոչ միայն Հայաստանի համար, այլ նաև բոլոր այլ երկրներ համար: Գոյություն չունի ոսկե լուծում, բայց պետք է զգոն լինել: Ծրագիրը պետք է զբաղվի նաև մրցակցության խթանման հարցերով, ինչպես մատչելիության ապահովման էական հետևանքներով: Սա կարևոր շեշտադրում է կատարում կարգավորչի վրա: Փոխանցող սարքեր ունցող և սրանք վարձակալության տվող փոխանցման ընկերությունը, ներառյալ պետական հեռարձակողը, ավելի լավ կարող է լինել, քան պետական սեփականատերը:

Մենաշնորհացումից խուսափելու առանցքային տարրերից է իրավական դրույթների սահմանումը, որն այլոց հնարավորություն է տալիս օգտվել ենթակառուցվածքից: ԵՄ անդամ պետությունների համար այսպիսի հնարավորության ապահովում մատչելիության դիրեկտիվայի պահանջ է¹³: Դիրեկտիվան շեշտադրում է, որ բաց ու մրցակցային շուկայում չպետք է սահմանափակումներ լինեն, որոնք կանխարգելում են բանակցված մատչելիությունը և իրենց միջև կնքված համադրության համաձայնությունները՝ ներառյալ անդրսահմանային համաձայնությունները: Սկզբունքորեն մատչելիության համար բարեխիղճ ձևով ներկայացված բոլոր հարցումները պետք է կատարվեն առևտրային հիմունքներով: Կողմերը կարող են որոշել մատչելիության պայմանները: Միևնույն ժամանակ, երբ գոյություն ունեն բանակցային ուժերի մեծ տարբերություններ և երբ որոշ նախաձեռնություններ հիմնվում են այլոց ենթակառուցվածքների վրա, ապա պետք է գոյություն ունենա մի կարգավորիչ շրջանակ՝ ապահովելու, որ շուկան աշխատում է: Սա շեշտադրում է անկախ կարգավորիչ իշխանությունների աշխատանքը: Կարևոր է, որ Հայաստանում կարգավորիչ մարմինը, ինչպես նաև շրջանակի կանոններն ու կանոնակարգումները կանխատեսեն, որ մատչելիության հարցը համապատասխան կերպով կարգավորվի: Ծրագրում նշված է, որ մասնավոր ալիքները պետք է որոշակի կերպով փոխհատուցեն ցանցային օպերատորների ծախսերը (II.3): Այստեղ միայն թափանցիկ և օբյեկտիվորեն հիմնավորված ծախսերը պետք է փոխհատուցվեն: Կարգավորիչը պետք է գնահատի սա: Համադրելիությունն ու մատչելիությունը մեկ ընկերության կողմից հնարավոր գերիշխանության կանխարգելման միջոցներն են և նույնիսկ եթե նրանք ոչ կատարյալ միջոցներ են, ապա կարգավորիչ մարմնի

¹¹ Լիտվան օրինակ է ծառայում:

¹² Դիրեկտիվա 2002/19/EC, մատչելիության դիրեկտիվա:

¹³ Դիրեկտիվա 2002/19/EC:

համապատասխան կիրառումն էական է:

Մատչելիության դիրեկտիվան մատնանշում է նաև, որ միայն մրցակցության կանոնները կարող են բավարար չլինել՝ թվային հեռուստատեսության բնագավառում ապահովելու մշակութային բազմազանությունն ու ՁԼՄ-ների տարակարծությունը: Մեկ անգամ ևս սա մատնանշում է, որ կարևոր է, որ կարգավորիչ մարմինը աչքի տակ պահի, թե ինչ պարտավորություններ են սահմանված թվային հեռարձակման շուկայի խաղացողների համար, որպեսզի ցանկացած մենաշնորհացում հասցվի նվազագույնի: Բովանդակության հարցերին պետք է փոխանցումից առանձին նայել, բայց ցանկալի բովանդակությունը պետք է ունենա փոխանցման հնարավորություն: Դիրեկտիվան հստակորեն մատնանշում է, որ կարգավորիչ աշխատանքն ու պահանջների կատարված գնահատումը շարունակական աշխատանք է և պետք է կատարվի շուկայի շարունակական վերլուծության միջոցով: Ինչպես ԵՄ մրցակցության և հեռահաղորդակցության ամբողջ օրենսդրության մեջ, զգալի շուկայական իշխանության օպերատորները հատուկ պարտավորություններ ունեն: Ընդհանուր առմամբ Եվրոպայի հեռահաղորդակցության ոլորտի համար տնտեսական վերլուծություններ պետք է օգտագործվեն և աստիճանաբար *ex ante* ոլորտին յուրահատուկ կանոնները պետք է նվազեցվեն ի նպաստ մրցակցության ընդհանուր օրենքի: Սակայն թվային հեռարձակման պես հատուկ հարցերի կապակցությամբ անհրաժեշտ են հատուկ կանոններ: Կարգավորիչը պետք է հավասարակշռի ենթակառուցվածքի սեփականատիրոջ և այլ օգտագործողների կարիքները: Մի երկրում, որտեղ մրցակցության ընդհանուր օրենսդրությունը և դրա կիրառումը թույլ է, առավել կարևոր է դառնում, որ կարգավորիչը ստուգի շուկայի պատշաճ աշխատանքը: ԵՄ դիրեկտիվան պահանջում է մատչելիության և համադրելիության ժամկետների և պայմանների թափանցիկություն: Սա մի բան է, որ Հայաստանի ծրագիրը պետք է շեշտադրի, հիմա դա բացակայում է: Անկախ կարգավորիչը պետք է բավարար իրավասություններ ստանալ և կարևոր է, որ կարգավորիչ աշխատանքը լինի օբյեկտիվ, թափանցիկ, համամասնական և ոչ խտրական¹⁴:

ԵՄ շրջանակային դիրեկտիվան¹⁵ մասնավորեցնում է, որ պետք է քաջալերել թվային ինտերակտիվ հեռուստատեսային ծառայությունների և հզորացված թվային հեռուստատեսային սարքավորումների համադրելիությունը սպառողի մակարդակով՝ ապահովելու տեղեկատվության ազատ հոսքը, ՁԼՄ-ների տարակարծությունը և մշակութային բազմազանությունը: Ցանկալի է, որ սպառողները ի վիճակի լինեն ստանալու ինտերակտիվ ամբողջ թվային հեռուստատեսությունը՝ ի շարք այլոց հաշվի առնելով տեխնոլոգիական չեզոքությունը, ապագա առաջընթացը և թվային հեռուստատեսության խթանման ընալումը: Թվային պլատֆորմի օպերատորները պետք է ձգտեն իրականացնելու բաց ծրագրային ինտերֆեյս (API), որը համապատասխանում է Եվրոպական ստանդարտներին: MoU-երը և նմանատիպները կարող են օգտագործվել՝ խրախուսելու համակարգերի միջև փոխանցումները:

6. Կարգավորման հարգել

Ծրագրի թույլ կողմերից մեկն այն է, թե ինչպես է այն վերաբերվում կարգավորման հարցերին: Քանի որ թվային հեռարձակումը սպեկտրում շատ ավելի տարածք է ազատում, կարգավորիչ աշխատանքների այսպիսի տարրերը, որոնք առաջանում են սպեկտրի սակավության, թվային միջավայրում չեն մնում: Մինևույն ժամանակ

¹⁴ Մատչելիության դիրեկտիվայով թվային հեռուստատեսության բաշխման հանրային էլեկտրոնային հաղորդակցման ցանցերից պահաջվում է նաև աջակցել լայնեկրան հեռուստատեսային ծառայություններին: Թվային ռադիոհեռուստատեսային հեռարձակումների համակարգերի պայմանական մատչելիության հատուկ պահանջները սահմանված են դիրեկտիվային հավելվածում: Սակայն, նույնիսկ ԵՄ անդամ պետությունների համար գոյություն ունեն հնարավորություններ, որ կարգավորիչ մարմինները սահմանեն չափանիշները, քանի որ շուկան մշտապես փոխվում է:

¹⁵ Դիրեկտիվա 2002/21/EU:

կարգավորչի համար մնում կամ ստեղծվում են այլ առաջադրանքներ: Պարզ չէ, թե արդյոք կարգավորիչը ներգրավված է եղել ծրագրի նախապատրաստման մեջ:

Ընդհանուր առմամբ Եվրոպայում (և այլուր) միտումը դեպի հաղորդակցության մի համակարգ է, որն օգտագործում է հնարավորինս թեթև կարգավորումը, որում չեզոք տեխնոլոգիա է, որն օգտագործում է լիազորման մի համակարգ, որը ներառում է բոլոր համադրելի համակարգերը նմանատիպ եղանակով՝ օգտագործված տեխնոլոգիաներից անկախ¹⁶: Պետք է օգտագործել ամենապակաս բարդեցված կարգավորման կամ լիազորման համակարգը, որը սովորաբար նշանակում է ընդհանուր լիազորում (ավելի շուտ գրանցման, քան որպես ծառայության մատուցման նախապայմանի պահանջով): Միևնույն ժամանակ համակարգը պետք է հարմարեցվի կարգավորվող խնդրին և թվային հեռարձակման ոլորտում, որտեղ կարող է անհրաժեշտություն լինել ակտիվ գործողություններ ծավալել, կանխարգելելու մենաշնորհների ստեղծման, կարգավորիչ մարմինները պետք է ունենա անհրաժեշտ գործիքները: Փոխանցման կարգավորումը պետք է առանձնացված լինի բովանդակության կարգավորումից, միևնույն ժամանակ ընդունվում է, որ փոխանցման և բովանդակության կարգավորման միջև կապերը պետք է հաշվի առնվեն հատկապես թվային միջավայրում: Հեռահաղորդակցության կարգավորման (փոխանցում) և հեռարձակման հարց դիտարկվողների միջև ավանդական բաժանումը իր մեջ չի ներառում թվային հեռարձակման բոլոր ոլորտները: Հեռարձակողները պետք է բավական ճկունություն ցուցաբերեն՝ հաշվի առնելով արդյունավետության և բարեկեցության խնդիրները, առաջացած միավորման պատճառով, փոխանցման և փոխանցվողի միջև ֆունկցիոնալ ու տնտեսական կապերը, որպեսզի երաշխավորվի ՋԼՄ-ների տարակարծությունը, մշակութային բազմազանությունն ու սպառողի պաշտպանությունը¹⁷: Միևնույն ժամանակ, ինչպես ցանկացած հեռարձակման կարգավորման գործում, բովանդակության կարգավորումը երբեք չի կարող նշանակել նախնական գրաքննություն կամ խոսքի ազատության անտեղի սահմանափակում: Լեզիտիմ հեռարձակման կարգավորման ուղղորդման համար գործող օրենսդրությունն ու սկզբունքները մնում են տեղին, ինչպես ցույց է տրված Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի Հոդված 10-ին վերաբերող Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի նախադեպի իրավունքում:

Թվայնացումը փոփոխություններ կառաջացնի հաղորդակցության օրենսդրությունում՝ հեռարձակման և հեռահաղորդակցության օրենքներում¹⁸: Պահանջվում են լիցենզավորման դրույթներ, որոնք համապատասխանում են թվային միջավայրին և սահմանում են ցանցերի և թվային ծառայությունների փոխանցման ու ստացման համար օգտագործվող սարքավորումների համադրելիությունը: Օրենքում սահմանված լիցենզավորման օբյեկտիվ, պարզ, թափանցիկ և ոչ խտրական կանոնները թվային ժամանակահատվածում առնվազն այնքան կարևոր են, ինչպես անալոգային ժամանակահատվածում: Թվային հեռարձակման, ինչպես նաև այլ լիցենզիաների համար պետք է լինեն բաց մրցույթներ: Որոշակի առումով, պահանջվում են հատուկ կանոններ, քանի որ փոխանցման համակարգը, մուլտիպլեքսների օգտագործումը և այլն տարբեր է ավանդական փոխանցումից, բայց որոշ հիմնական հարցեր մնում են նույնը: Տեխնիկական պահանջների կատարման և հեռարձակման պահանջների ապահովման լիենզիայի հիմնական գաղափարը նոր չէ: Բովանդակության առումով, այն ինչ մտնում է փոխանցման համակարգ, կարևորն այն է, որ լիցենզավորումը դեռ գոյություն ունենա՝ ատուգելու հիմնական սկզբունքների կիրառումը: Իրավական-կարգավորիչ դաշտն ընդհանուր առմամբ պետք է ներառի հեռարձակման սկզբունքների լավագույն եվրոպական ստանդարտները: Անչափահասների պաշտպանությունը, ատելության սերմանման խուսափումը և այսպիսի հարցերը ավելի տեղին են թվային հեռարձակման համար (ինչպես շեշտադրված է նաև Եվրոպայի Խորհրդի առաջարկության մեջ): Թվայնացման միջոցով հնարավոր չէ «նորոգել» պորբլեմները իրավակարգավորիչ

¹⁶ Կես ԵՄ լիազորման դիրեկտիվա, դիրեկտիվա 2002/20/EC, ինչպես նաև շրջանակային դիրեկտիվա, դիրեկտիվա 2002/21/EC:

¹⁷ Շրջանակային դիրեկտիվա, դիրեկտիվա 2002/21/EC:

¹⁸ Այս վերլուծությունը չի ներառում Հայաստանի համապատասխան օրենսդրության վերլուծությունը:

դաշտով: Քանի դեռ համապատասխան մարմինների կողմից ջանքեր ներդրված չեն, թվայնացումն ինքնին չի հանգեցնի մշակույթի և կրթության ոլորտում սոցիալական գործառույթների բարելավմանը: Ինտեգրված թվային ցանցը ինքնին չի ստեղծվում (II.4): Բովանդակության ներքին արտադրությունը նույնպես աջակցության կարիք ունի կամ պակաս տարակարծության վտանգ կառաջանա նույնիսկ ավելի շատ ալիքների առկայության դեպքում:

Թվայնացման պարագայում կարգավորչի խնդիրները մնում են շատ կարևոր, առնվազն ծրագրի II.3 նշված սոցիալական փաթեթի ծրագրերի ընտրության գործում: Այստեղ ասված է, որ ընտրված մասնավոր հեռարձակողների ծրագրերը պետք է լինեն պետական հեռարձակողների ծրագրերի նման: Սա մի քիչ պարզ չէ, բայց ենթադրաբար սա վերաբերում է իրենց ունեցած բովանդակությանը: Այլ սահմանում է նաև, որ ընկերությունները պետք է լինեն վճարունակ և ծրագրերը տեխնիկապես հստակ ու համապատասխանեն տվյալ տեսակի հեռարձակմանը: Սրա լեզվի մասին պահանջներ են, բայց կարևոր է, թե ինչպես և ով է կատարում ընտրությունը: Ակնհայտորեն կարգավորիչը պետք է ընտրություն կատարի՝ հիմնվելով թափանցիկ և օբյեկտիվ չափանիշների վրա: Ապագայում լրացուցիչ մուլտիպլեքսների, ինչպես նաև հեռարձակողների ստեղծումը պետք է ընտրության մրցակցության համար իրական հնարավորություն ունենա:

Թվային լիցենզիաները պետք է տրվեն բավարար երկար ժամանակահատվածի համար, որպեսզի լիցենզավորվածները իրենց բավարար ապահով զգան՝ անհրաժեշտ ներդրումներ կատարելու համար: Երկարաձուլը պետք է հնարավոր լինի և լիցենզիայի ժամկետները պետք է ճկուն լինեն, որպեսզի տարբեր ծառայություններ առաջարկվեն¹⁹: Կարող է նաև անհրաժեշտ լինել ավելի ճկուն լիցենզավորման պայմաններ առաջարկել, երբ հետ քաշման և անցման պես տարբեր բաները դեռ ապահով չեն: Թվային լիցենզիաները պետք է հարմարեցվեն այն բանին, ինչն առանձնահատուկ է թվայինին:

Որոշ եվրոպական երկրներում թվային հեռարձակման վերաբերյալ կա հատուկ օրենսդրություն (Շվեդիա, Իսպանիա, Իտալիա), այլ երկրներում դրույթներ են ավելացվել հեռահաղորդակցության ընդհանուր օրենսդրության մեջ (ՄԹ, Գերմանիա): Երկու տարբերակներն էլ հնարավոր են, բայց ցանկացած պարագայում հատուկ դրույթներ պետք է լինեն, քանի որ թվայինը հատուկ խնդիր է և դրանցից համադրելիությունը վերջինը չէ: Օրենսդրությունը պետք է ընդունված լինի փաստացի սկզբից առաջ և կարգավորման այդ հարցերը չպետք է ետ ընկնեն զարգացումներից²⁰: Հարցը, թե արդյոք օրենսդրությունը կամ տեխնոլոգիական զարգացումը պետք է առաջինը լինի, միշտ բարդ է: Մի կողմից օրենսդրությունը արգելակի զարգացումները և մյուս կողմից զարգացումները կարող են ստեղծել *fait accompli* (կատարված փաստ), այնպես որ օրենսդրությունը չկարողանա ազդեցություն ունենալ: Բայց երբ տեխնոլոգիական զարգացումները հասել են մի փուլի, երբ այն անմիջապես վերաբերում է սպառողներին, ապա օրենսդրություն պետք է գոյություն ունենա:

Կարգավորման ազգային մարմինները պետք է ունենան բոլոր անհրաժեշտ ռեսուրսները, որպեսզի նրանք կարողանան կատարել իրենց պահանջները: Հեռարձակման և հեռահաղորդակցության միավորումը, որն իր հետևից բերում է թվայնացումը, նշանակում է, որ կարգավորիչ մարմինների մեջ ավելի շատ համագործակցության կարիք կա: Հեռահաղորդակցության կարգավորում դիտարկվող շատ ոլորտները կիրառելի են հեռահաղորդակցության համար: Միգուցե հայկական կարգավորիչ մարմինը լրացուցիչ հզորակցման կարիք ունի, որպեսզի այս ծրագիրը պատշաճ կատարվի և սա պետք է նշվի: Քանի որ կարգավորիչ մարմինը պետք է կարողանա լուծել ձեռնարկումների միջև վեճերը, ապա շատ կարևոր է, որ այն լինի ցանկացած ձեռնարկումից անկախ: Նախկին պետական հեռարձակողի և/կամ փոխանցողների սեփականատիրոջ ու կարգավորչի

¹⁹ Տես COM(2003)541 վերջնական:

²⁰ Ինչպես տեղի ունեցավ Ալբանիայում, որտեղ թվային հեռուստատեսության նախապատրաստումը կատարվել էր առանց օրենքում համապատասխան դրույթի, որը հանգեցրեց ԵԱՀԿ ուժեղ քննադատության, տես զեկույցը:

միջև չպետք է լինի ոչ մի կապ, քանի որ այս պարագայում կարող է ռիսկ առաջանալ:

Իրավական հստակությունը կարգավորիչ աշխատանքի կարևոր տարրն է: Պայմանների փոփոխությունը, ինչպես նաև տրված լիազորությունների անվավեր ճանաչումը միշտ պետք է կատարվեն օբյեկտիվորեն հիմնավորված եղանակով և համամասնորեն: Համապատասխան անձնավորություններին պետք է ողջամիտ ժամանակ ու նաև հնարավորություն տրվի՝ արտահայտելու փոփոխությունների մասին սեփական կարծիքը: Անցումային դրույթները և գործող լիցենզավորվածները, որոնք ենթադրաբար ունեն գործող լիցենզիաներ ծրագրի թույլ կողմերից են: Եթե սրանք պետք է վաղ դադարեցվեն, ապա մի քանի իրավական հարցեր կարող են առաջանալ, ինչպիսիք են լեգիտիմ ակնկալիքները: Լիցենզիաները չեն կարող պարզապես վաղ դադարեցվել առանց հաշվի առնելու այն հեռարձակողների շահերը, որոնք ներդրումներ են կատարել և հաշվարկներ են կատարել որոշ բիզնես ժամանակահատվածի համար: Լիցենզիաները դադարեցման կամ կարճեցման համատեքստում պետք է պահպանել արդարությունն ու օբյեկտիվությունը: Վտանգ կա, որ որոշ հեռարձակողները, թվայնացմանը մասնակցելու համար ընտրված, ավելի լավ վերաբերմունքի կարժանանան: Ինչպես նշվեց հաճախականության հարցերի մասում, չնայած հնարավոր տարբերակ է անալոգային լիցենզիաների մորատորիան, այն բարձրացնում է նաև գործող հեռարձակողների օրինական ակնկալիքների հարցը:

Կարգավորման մեկ ոլորտ է սպառողների շահերը, որը չպետք է մոռացվի: Կարգավորիչը պետք է ապահովի, որ սպառողները կարողանան անցում կատարել մատակարարների միջև և որ նրանց անողջամիտ պայմանագրեր չեն պարտադրում և այլն: Սա հեռարձակման կարգավորման սպառողի պաշտպանության անկյունների և թվայինի նոր դրույթների միավորումն է:

Շատ երկրներ թվային անցման համար ունեն հատուկ մարմիններ: Այսպիսի մարմինները նույնպես կարևոր դերակատարում ունեն քննարկվող հարցի հանրամատչելիությունն ապահովելու համար: Պարզ չէ, թե որ մարմինն է Հայաստանում զբաղվում այս խնդրով: Այս մարմինը պետք է սերտորեն համագործակցի անկախ կարգավորչի հետ:

7. Հանրային հեռարձակողի դերը

Թվայինը չպետք է նշանակի, որ հանրային հեռարձակումը և դրա սկզբունքներն ու առաջադրանքներն անհետանում են: Սա շեշտադրվում է Եվրախորհրդի, ԵՀՄ-ի և այլ միջազգային մարմինների կողմից: Թվայնացումը հանրային ծառայության համար մի մարտահրավեր է, ոչ նվազագույնը լսարանների ֆրագմենտացիայի միջոցով, բայց այն չպետք է դիտարկել ոչ որպես հանրային հեռարձակումից ազատվելու և ոչ էլ դրանից ավտոմատ առաջացած պրոբլեմների լուծման մեթոդ²¹: Հանրային ծառայության հեռարձակման ֆինանսավորման անհրաժեշտությունը և ապահովումը, որ դա կատարում է իր գործառույթները նաև թվային միջավայրում այնուհանդերձ մնում են: Հետևաբար պահանջվում է ուժեղ և անկախ հանրային հեռարձակող; Կառավարության, հեռուստատեսության և ռադիո ընկերությունների, ցանցային օպերատորների և ոլորտի միջև գործընկերության վերաբերյալ ծրագրում նշված խնդիրներում հանրային ծառայության հեռարձակողի դերը հստակ չէ: Թվայնացման վտանգներից մեկն այն է, որ հանրային հեռարձակողին առաջատար դեր է տրվում առանց համապատասխան ֆինանսավորման: Հանրային հեռարձակման վճարը սովորաբար չի դիտարկվում, որպես թվայնացման համար օգտագործվող գումար, քանի որ սա նախատեսվում է հեռարձակողի ծրագրերի պատրաստման աջակցության համար:

²¹ UNESCO Տեղեկատվական հասարակության համաշխարհային զագաթնաժողովի աշխատաժողով, Ժնև, դեկտեմբեր 2003թ.:

Ծրագրի սահմանումներում, սոցիալական փաթեթը սահմանվել է, որպես, ծրագրերի մի փաթեթ, որը ստեղծված է պետական բյուջեի ֆինանսավորմամբ: Սա սխալ չէ, բայց պետք է նշել, որ ծրագիրը շատ բան չի ասում հանրային ծառայության հեռարձակողի մասին: Սա նույնը չէ ինչ որ պետական (և հատկապես կառավարական) հեռարձակումը: Ասված է, որ սոցիալական փաթեթը պետք է լինի հանրային ծառայության փաթեթը, դրանից զատ հանրային ծառայության հեռարձակողների դերը միշտ չէ, որ պարզ է: Հանրային ծառայության հեռարձակման խնդիրները և թերությունները պետք է կարգավորվեն թվայնացումից անկախ և պետության ներգրավածությունը հեռարձակման մեջ, ինչպես պետական մարմինների ներգրավածության դեպքում, թվայնացման պատճառով չպետք է լինի ավելի մեծ:

Սոցիալական փաթեթի գաղափարն այն է, որ այն կապահովի, որ հանրային ծառայության բնույթի հեռարձակումը մատչելի կլինի բոլոր մարդկանց համար: Հանրային ծառայության հեռարձակողի այսպիսի հեռարձակում տրամադրելու խնդիրը թվային հեռարձակման դեպքում մնում է: Ավելի շատ ալիքներ և քանակապես ավելի շատ ընտրությունը չի նշանակում ավելի շատ տարակարծությունը, այնպես որ հանրային ծառայության հեռարձակողի խնդիրը հոգ տանելու այն կարիքների համար, որոնք տարբերվում են մասնավոր հեռարձակողների կարիքներից, պետք է սրա համար համապատասխան միջոցներ ունենա: Միայն պարզապես առևտրային սպառողի կարիքը չի կարող որոշել, թե ինչ բովանդակություն է մատչելի և հեռարձակման միջոցով ինչպես է հնարավոր լավագույնս ապահովել մատչելիությունը: Այն գաղափարը, որ որոշ միջոցառումներ այնքան կարևոր են, որ պետք է մատչելի լինեն բոլորին, ինչպես սահմանված է եվրոպական հեռարձակման միությանը, միայն մի մատնանշում է, որ հեռարձակման որոշ բովանդակության հանդեպ որոշ հետաքրքրություն կա: Շատ երկրներում, թվայնացման ժամանակ գործող հանրային հեռարձակման ծրագրերին կավելացվի առնվազն մեկ նոր ծրագիր, ինչպիսին է 24-ժամյա նորությունները: Սոցիալական փաթեթը կարող է ներառել նաև որոշ անվճար առևտրային ալիքներ, որոնք փոխլրացնում են հանրային հեռարձակման ալիքները: Թվում է, որ սա է Հայաստանի փաթեթի նպատակը (ինչպես II.3-ում) և ծրագրերի կոնկրետ տեսակը պետք է ընտրվի, որպես ծրագրի նախնական փուլ: Այսպիսի ընտրությամբ է, որ տարակարծության հարցն առաջադրվում է: Բովանդակության տարակարծությունը նշված է պլանում: Կարելի է ընդգծել սրա կարևորությունը:

8. Հանրային մասնակցությունը թվայնացման պլանավորմանը

Թվային հեռարձակման պիանջարկի և հետաքրքրության առաջացումը անցման կարևոր մասերից մեկն է, ոչ վերջին հաշվով, որպեսզի մարդկի սկսեն գնել ընդունման սարքեր և կանավոր անցում կատարեն թվայինին: Այսպիսի անցումն ամբողջ եվրոպայում հիասթափեցնող է եղել, որն ընդգծում է պահանջարկի խթանման համար տեղեկատվության կարևորությունը: Կարևոր է մարդկանց իրազեկել գործընթացի մասին: Այնպիսի տեղեկատվական արշավները, ինչպիսիք են ինտերնետային էջերը ՄԹ-ում, Ֆինլանդիայում և Շվեդիայում, օրինակ են հետաքրքրություն ստեղծելու և գիտելիքի տարածման ջանքերի վերաբերյալ:

Եվրախորհրդի առաջարկությունների սկզբունքներից մեկն այն է, որ պետությունները պետք է նախագծեն թվայնացման հստակ ռազմավարությունը: Այս առաջարկությունը Հայաստանում ընդունված է ներկա ծրագրով, նույնիսկ եթե կան ոլորտներ, որտեղ ռազմավարությունը կարող է ավելի լավ սահմանվել: Հուսով ենք, որ ծրագիրն առաջին քայլն է ռազմավարության սահմանման գործում և որ ռազմավարության սահմանման գործընթացում հասարակությունը կներգրավվի: Շատ երկրներում կանոնների սահմանման գործընթացը հաշվի է առել թվայնացման ռազմավարությունը՝ առաջարկություններ ստանալով լայն հասարակությունից: Սա առաջարկվում է, որպեսզի համապատասխան շահագրգիռ կողմերից վաղ ստացվի ներդրում և հետաքրքրություն առաջանա: Նույնիսկ եթե քիչ հավանական է, որ ընդհանուր հասարակությունը շատ

ներդրում ունենա բարդ տեխնիկական գործընթացին, այնուհանդերձ ոլորտի նեկայացուցիչները, այլ առանձնահատուկ հետաքրքրված կողմերը և այլոք կարող են իրենց մասնակցությունն ունենալ: Մասնակցությունը/ներդրումը կարևոր է տարբեր առումներով, ինչպիսիք են հեռարձակման բովանդակությունը, տեխնիկական մասնագրումները, ենթակառուցվածքի հարցերը և այլն: ԵՄ դիրեկտիվաներում շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունը նույնպես մի սկզբունք է:

Ծրագրում հակիրճ նշումից (II.5) բացի նշված չէ չափանիշների սահմանումն ու դրանց մասին ՁԼՄ-ներով հասարակությանը իրազեկ դարձնելը, ոչ էլ շատ բան է նշված ՁԼՄ-ների օգտագործման և դրանց միջոցով մարդկանց տեղեկացնելու մասին: ՁԼՄ-ների օգտագործումը չի ենթադրում, որ անհրաժեշտություն չկա ակտիվ հանրային կանոնների սահմանման համար:

Անցման համար նշված են տարբեր տարբերակներ, որը լավ է, բայց սա այն տեսակ հարցն է, որտեղ հանրային կանոնների սահման գործընթացը հետաքրքիր կլինի՝ տարբեր տարբերակների կողմի և դեմի վերաբերյալ ավելի շատ կարծիք ստանալու համար:

Հավելված 1

Նախագիծ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
կառավարության _____
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

Հայաստանի Հանրապետությունում ռադիոհեռուստատեսության բնագավառում հեռարձակման թվային համակարգի ներդրման

Այս փաստաթղթի իրավական բնույթը ամբողջովին պարզ չէ, առնվազն առանց Հայաստանի իրավական համակարգի մասին հստակ գիտելիքների: Այն կոչվում է կառավարության որոշում, որը թվում է, որ պետք է ունենար նորմատիվ բնույթ, բայց ոճը ավելի շատ նկարագրողական է, քան նորմատիվ: Փաստաթուղթը բաժին 4-ում նշել է, որ «Ծրագրի հիմնական նպատակն է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում անայոգայինից թվային հեռարձակման անցնելու պայմանների ստեղծումը», այնպես որ ենթադրաբար դրա հիմնական նպատակն է լինել առաջին քայլը և լրագուգիս որոշումները դեռ կկայազվեն այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են օրինակ ժամանակագույզում նշված պլանի ստեղծումը, այսինքն սա մի պլան է, թե ինչպես պետք է կատարել մանրամասն պլանը, քան թե վերջնական պլան, թե ինչպես է կատարվել աշխատանքը: Սա տեղին է, որովհետև որոշակի առումով փաստաթուղթը չափազանց անորոշ է՝ թվայնագման համար վերջնական լինելու համար: Վերջնական ռազմավարությունը մշակելու համար պետք է տեղի ունենան հանրային քննարկումներ:

I. Ծրագրում օգտագործվող հիմնական հասկացությունները

Պետք է սահմանել բոլոր ընդհանուր առմամբ ոչ հայտնի տերմինները, մի քան որ այստեղ չի կատարվել: (Օրինակ MMDS - բազմայիք, բազմակետ առաքման համակարգ - սահմանված չեն):

1. Սույն ծրագրում օգտագործվող հիմնական հասկացությունները ունեն հետևյալ իմաստները՝

մալուխային հեռուստահեռարձակում կամ ռադիոհեռարձակում՝ հեռուստածրագրերի կամ ռադիոծրագրերի տարածում, որի ժամանակ կապի մալուխային գծերի միջոցով հաղորդվող ազդանշաններն ընդունվում են սպառողի վերջնակետային սարքավորումներով.

հաղորդիչ երկրային կայան՝ երկրային կայան, որն ապահովում է հեռուստածրագրերի և (կամ) ռադիոծրագրերի ազդանշանների հաղորդումը հեռարձակող և (կամ) կապի արբանյակներին.

հեռուստածրագրերի և (կամ) ռադիոծրագրերի սոցիալական փաթեթ՝ բյուջեի ֆինանսավորմամբ ստեղծվող և բնակչությանը, առանց բաժանորդագրային սահմանափակման հաղորդվող հեռուստածրագրերի և (կամ) ռադիոծրագրերի փաթեթ, որի ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

հեռուստատեսային հաղորդիչ կայան կամ ռադիոհաղորդիչ կայան՝ եթերային

հեռուստատեսային կամ ռադիոհեռարձակման օբյեկտ՝ բաղկացած մեկ կամ ավելի հաղորդակներից և անտենա-կայմային (ֆիդերային) կառույցներից.

հեռուստաձրագրերի կամ ռադիոձրագրերի հեռարձակման ցանց՝ տեխնոլոգիական համակարգ, որը իր մեջ ներառում է կապի միջոցներ ու գծեր և նախատեսված է իրական ժամանակում հեռուստաձրագրերի կամ ռադիոձրագրերի ազդանշանների հեռարձակման համար՝ եթերային, մալուխային կամ արբանյակային կապուղիներով.

արբանյակային ուղղակի հեռուստահեռարձակում կամ ռադիոհեռարձակում՝ հեռուստաձրագրերի կամ ռադիոձրագրերի հեռարձակում, որի ժամանակ արբանյակից հաղորդվող ազդանշանները ընդունվում են սպառողի վերջնակետային սարքավորումով.

հեռուստատեսային հեռարձակում կամ ռադիոհեռարձակում՝ հեռուստաձրագրերի կամ ռադիոձրագրերի հեռարձակման ցանցի օպերատորի կողմից իրականացվող գործունեություն, որն ուղղված է բնակչությանը, պետական մարմիններին կամ իրավաբանական անձանց հեռուստաձրագրերի կամ ռադիոձրագրերի և լրացուցիչ տեղեկատվություն ստանալու պահանջների բավարարմանը և հեռարձակողին հեռուստաձրագրերի կամ ռադիոձրագրերի հեռարձակման հնարավորություն տրամադրելուն.

վերերկրյա եթերային հեռուստահեռարձակում կամ ռադիոհեռարձակում՝ հեռուստաձրագրերի կամ ռադիոձրագրերի տարածման ծառայություններ, որի ժամանակ վերերկրյա հաղորդիչ կայաններով հաղորդվող հեռուստաձրագրերի կամ ռադիոձրագրերի ազդանշանները ընդունվում են սպառողի վերջնակետային սարքավորումներով:

II. Հեռուստատեսային հեռարձակում

2. Հայաստանի Հանրապետությունում հեռուստաձրագրերի հեռարձակման ցանցի բնութագիրը: Բնակչության ընդգրկվածությունը բազմաձրագրային հեռուստատեսային հեռարձակմամբ

Հայաստանի Հանրապետության տարածքում հեռուստաձրագրերի հեռարձակման ցանցը ներկայումս ապահովում է 3 հանրային և 53 մասնավոր հեռուստաընկերությունների ձրագրերի տարածումը:

Հայաստանի տարածքի ընդգրկվածությունը հեռուստաձրագրերով կազմում է.

ա) հանրային հեռուստաընկերության ձրագրերով՝ 99,8%,

բ) «Հայկական 2-րդ ալիք» ձրագրով՝ 93,8%:

Որոշ մասնավոր հեռուստաընկերություններ («Արմենիա», «ԱԼՄ», «Շանթ»), բացի Երևանի հաղորդակներից, ունեն նաև 10-ից 15 սեփական հեռուստատեսային վերահաղորդակներ մարզերում: Մարզերում հեռարձակվում է նաև 33 մասնավոր հեռուստաձրագիր:

2006 թվականի հունվարի 1-ի դրությամբ բնակչության ընդգրկվածությունը հեռուստահեռարձակմամբ հանրապետությունում կազմում է.

մեկ և ավելի հեռուստածրագիր՝	99,8%,
երկու և ավելի հեռուստածրագիր՝	97,4%,
երեք և ավելի հեռուստածրագիր՝	95,1%,
չորս և ավելի հեռուստածրագիր՝	88,4%,
հինգ և ավելի հեռուստածրագիր՝	85,8%:

Սպառողների վերջնակետային սարքավորումներով ընդունվող ազդանշանների ընդունման հիմնական աղբյուրը հանդիսանում են եթերային հեռուստատեսային հեռարձակման միջոցները: Ըստ հեռարձակվող հեռուստածրագրերի քանակի՝ կենտրոնի (մայրաքաղաքը և Արարատյան դաշտավայրի բնակավայրերը) և մյուս բնակավայրերի միջև գոյություն ունի զգալի անհավասարություն: Եթե Երևանում մշտապես գործում են երկու տասնյակից ավելի հեռուստաընկերություններ, ապա հանրապետության ավելի քան 80 հազար բնակչություն ունեցող թվով 128 բնակավայրերում ընդունվում է մեկ, 90-ում՝ երկու և միայն 781-ում՝ երեք և ավելի հեռուստածրագրեր: Ընդ որում, այն գյուղերում, որտեղ ընդունվում է 2-3 հեռուստածրագրեր, մեկը հանրայինն է, մյուսները՝ հիմնականում ռուսական:

Հայաստանի Հանրապետությունում հեռուստածրագրերով ընդհանրապես ընդգրկված չէ բնակչության 0,2%-ը, այդ թվում՝ 0,3%-ը գյուղական, 0,1%-ը քաղաքային: Այդուհանդերձ, բնակչության 85,5%-ը կարող է դիտել 5 և ավելի հեռուստածրագրեր:

Հանրապետության բնակչության ընդգրկվածությունը մալդիսա-եթերային հեռուստատեսությամբ (ՄԵՀՏ, ՄՄԴ-Ս) գնահատվում է 1,3%, իսկ բնակչության շրջանում արբանյակային ուղղակի հեռարձակվող հեռուստածրագրերից օգտվողների թիվը՝ 0,5%:

Բացառությամբ ՄՄԴ-Ս-ի (մոտ 60 հեռուստածրագիր), մայրաքաղաքում եթերային հեռարձակումն ամբողջությամբ անալոգային է:

Հեռուստածրագրերով բնակչության ընդգրկվածության ցուցանիշները բերված են աղյուսակներ 7-ում և 8-ում:

Հեռուստածրագրերով ընդգրկվածության վերաբերյալ վիճակագրական տվյալները բերված են աղյուսակներ 10-ից մինչև 14-ը:

Հայաստանի մարզերի բնակչության, այդ թվում՝ քաղաքային և գյուղական, ընդգրկվածության վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս հետևյալը.

1) մարզերի բնակչության ընդգրկվածությունն ընդհանուր առմամբ ցածր է երկրի միջին ցուցանիշներից.

ա) մեկ հեռուստածրագիր (միջինը՝ 99,8%) 4 մարզում (Արագածոտն, Շիրակ, Վայոց Ձոր, Սյունիք),

բ) երկու հեռուստածրագիր (միջինը՝ 97,4%) 7 մարզում (Արագածոտն, Շիրակ, Վայոց Ձոր, Սյունիք, Գեղարքունիք, Լոռի, Տավուշ):

2) քաղաքային բնակչության ընդգրկվածությունը ցածր է երկրի միջին ցուցանիշներից.

ա) մեկ հեռուստածրագիր (միջինը՝ 99,9%) 3 մարզում (Արագածոտն, Վայոց Ձոր,

Սյունիք),

բ) երկու հեռուստաձևեր (միջինը՝ 99,9%) 3 մարզում (Արագածոտն, Վայոց Ձոր, Սյունիք):

3) գյուղական բնակչության ընդգրկվածությունը ցածր է երկրի միջին ցուցանիշներից.

ա) մեկ հեռուստաձևեր (միջինը՝ 99,7%) 4 մարզում (Արագածոտն, Շիրակ, Վայոց Ձոր, Սյունիք),

բ) երկու հեռուստաձևեր (միջինը՝ 92,8%) 5 մարզում (Վայոց Ձոր, Շիրակ, Լոռի, Տավուշ, Սյունիք):

Այսպիսով, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում, ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակչության՝ մեկ և երկու հեռուստաձևերով ընդգրկվածության բոլոր ցուցանիշները ցածր են երկրի միջին ցուցանիշից:

Հայաստանի հեռուստաձևերի հեռարձակման ցանցում հեռուստաձևերի ազդանշանների հեռարձակումն իրականացվում է առավելապես վերերկրյա կապուղիների օգտագործմամբ, որոնք կազմակերպվում են ռադիոռելեային գծերով (ՌՌԳ): Հիմնական հաղորդակցության ուղիներից կտրված (մեկուսացված) հեռավոր բնակավայրերում հանրային հեռուստաընկերության հեռուստաձևերն ընդունվում են արբանյակից: Առանձին դեպքերում հեռուստաձևերի ընդունումն իրականացվում է եթերով, հեռուստատեսային վերահաղորդիչներով:

Հանրային հեռուստաընկերության ծրագրերի տարածումը հանրապետության սահմաններից դուրս և ընդունումը Հայաստանի 89 բնակավայրերում իրականացվում է արբանյակային սեզմենտի վարձակալմամբ:

2006 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրային և մասնավոր բոլոր մակարդակների (հանրային, մարզային, տեղական) հեռուստաընկերությունների ծրագրերի բազմաձևազրային հեռուստատեսային հեռարձակումն իրականացնում են գործող 433 հաղորդակները, որոնք տեղակայված են հեռուստաձևերի հեռարձակման պետական ցանցի թվով 192 հեռուստատեսային կայաններում: Թվով 30 հեռուստատեսային կայանները մասնավոր են:

3. Հեռուստատեսային հեռարձակման զարգացման ծրագրի հիմնական ցուցանիշները

Հանրային հեռուստաընկերության ծրագրերը («Հ1», «Նոր Ալիք») իրականացնում են հանրային հեռարձակման գործառույթներ և թվային հեռուստատեսային (ԹՀՏ) հեռարձակման անցնելիս պետք է պահպանեն իրենց դերը և համընդհանուր հասանելիությանն ու բովանդակային բազմազանությանն ուղղված քաղաքականությունը:

ԹՀՏ հեռարձակման անցնելիս խնդիր է դրվում ձևավորել 4-5 հեռուստաձևերից քաղկացած մեկ պարտադիր անվճար հեռուստաձևերի սոցիալական փաթեթ՝ ԴՎԲ ստանդարտով հանրապետության տարածքում և արտերկրում արբանյակի միջոցով հեռարձակելու նպատակով:

Հեռուստածրագրերի սոցիալական փաթեթը ձևավորելիս, բացի հանրային հեռուստաընկերության ծրագրից, մեկ մուլտիպլեքսացված փաթեթի կազմում կհայտնվեն նաև 2-3 գործող մասնավոր հեռուստաընկերությունների ծրագրեր, որոնք ստեղծագործական և տեխնիկական առումով պետք է կատարեն հանրային հեռարձակման գործառույթներ: Դրանք պետք է լինեն վճարունակ ընկերություններ, որոնց ծրագրերը տեխնիկական հագեցվածությամբ պատրաստ կլինեն հեռարձակվել համատեղ ռեժիմով, ստանդարտ ձևաչափով:

Անցումային շրջանում, մինչ թվային հեռուստատեսային հեռարձակման շուկայի (վճարունակ պահանջարկի) ձևավորումը, այդ ընկերությունների եկամտի աղբյուրը կարող է լինել գովազդը:

Ինչպես նշված է վերլուծության մեջ, սա հարցերի տեղիք է տալիս: Մեկ հարց ուղղակիորեն կապված ձևակերպման հետ այն է, որ գուցե նրանց հետագայում թույլ չտան գովազդ անել: Թվային համակարգում գովազդումը բարդ է, լսարանների ֆրագմենտացիա և այլն, դա նշանակում է, որ եկամուտը կարող է բավարար չլինել: Թվային անցման ֆինանսավորման հարցը կարևոր է և բարդ:

Ընդհանուր առմամբ, ԹՀՏ հեռարձակման անցնելիս, նախատեսվում է հանրապետության տարածքում ձևավորել և հեռարձակել հեռուստածրագրերի ևս երեք փաթեթ, յուրաքանչյուրում՝ 4-5 հեռուստածրագիր:

Հեռուստածրագրերի սոցիալական և այլ լրացուցիչ փաթեթների ձևավորումը՝ վերերկրյա, մալուխային և արբանյակային ցանցերով հեռարձակելու համար, պետք է իրականացվի կենտրոնում (Երևանում), հեռուստատեսային հեռարձակման ոլորտում ծառայություններ մատուցող՝ հեռուստածրագրերի հեռարձակման ցանցի հիմնական օպերատորի տեխնիկական բազայի վրա՝ գլխամասային կայանից:

Մարզային հեռուստաընկերությունների նյութերը գլխամասային կայան հասցնելու և սոցիալական ծրագրերի փաթեթում ներառելու համար հեռուստածրագրերի հեռարձակման ցանցը պետք է ունենա ծայրամասերից մինչև կենտրոն՝ հետադարձ ուղղությամբ, կապուղիների բավարար ունակություն:

Տեղերում տարածաշրջանային հեռուստածրագրերի ազդանշանի միացումը (մուլտիպլեքսացումը) կպահանջի հեռուստածրագրերի հեռարձակման ցանցի լրացուցիչ միջանկյալ կառուցվածքների ստեղծում և սարքավորումների համար մեծ ծախսեր:

Հետագայում ԹՀՏ հեռարձակմանը լիովին անցնելուց հետո, հեռուստաընկերությունների համար հավասար պայմաններ ստեղծելու նպատակով նպատակահիմար է, որպեսզի մասնավոր հեռուստաընկերությունների հեռուստածրագրերի փաթեթերը ձևավորվեն ինչպես կենտրոնում, այնպես էլ տեղերում: Հեռուստածրագրերի այս փաթեթը նշանակման վայր հասցնելու և սփռելու ծախսերը պետք է կրեն հեռուստաընկերությունները:

Ինչպես նշված է վերլուծության մեջ, սա ինչ որ չափով հստակ չէ, առնվազն կարգավորչին վերաբերող դերի կապակցությամբ և ինչպես է լիցենզավորման

գործընթացը տեղի ունենալու: Հեռուստատեսային ընկերությունների պարագայում վերջնակետին այսպիսի փաթեթների հասցման և դրանց տարածման ծախսերի և ենթակառուցվածքի մատչելիության հարցերը տեղին են:

Լրացուցիչ հեռուստածրագրերի հեռարձակումը ԹՀՏ հեռարձակման ցանցերով կարող է իրականացվել հեռուստածրագիրը ստեղծող հեռուստաընկերության որոշմամբ, որը պետք է նախատեսի նաև հեռուստածրագրերի հեռարձակման ցանցի օպերատորներին առնվազն այս ծրագրերի հեռարձակման համար լրացուցիչ շահագործական ծախսերի փոխհատուցման վճար:

Արդարությունն ապահովելու համար կարգավորիչը պետք է դերակատարում ունենա փոխահուցման ծախսերը սահմանելու գործում:

4. Ծրագրի նպատակներն ու խնդիրները: Թվային եթերային հեռուստածրագրերի հեռարձակման ցանցի ներդրման հիմնական սկզբունքները

Ծրագրի հիմնական նպատակն է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում անալոգայինից թվային հեռարձակման անցնելու պայմանների ստեղծումը:

Հայաստանում ԹՀՏ հեռարձակման համակարգի ներդրումը պայմանավորված է բնակչության պահանջումները տեղեկատվության նկատմամբ առավել արդյունավետ և լիարժեք բավարարելու անհրաժեշտությամբ: Այդ խնդիրը հնարավոր է իրականացնել հեռուստատեսային ցանցը ժամանակակից, տնտեսության մեջ կայուն գործող և շուկայական պայմաններում ինքնագարգացման ներուժով օժտված ցանցի բարեփոխելու միջոցով:

Թվային հեռարձակման անցնելու խնդիրը պետք է ունենա համալիր լուծում. հեռարձակողից մինչև սպառող ազդանշանի հեռարձակման շղթայի բոլոր օղակները պետք է աշխատեն թվային ձևաչափում:

Այս գործընթացի հիմնական խնդիրներից մեկը բազմածրագրային հեռուստատեսային հեռարձակմամբ բնակչության ընդգրկվածության անհամամասնության վերացումն է և ողջ բնակչությանը երաշխավորված իրավահավասար տեղեկատվական պաշարների հասանելիության ապահովումն է:

Այս մտտեցումը կապահովի նաև ռադիոհաճախականության տիրույթի առավել արդյունավետ օգտագործումը, եթերում հեռարձակվող ծրագրերի թվի աճը, ներգործուն (ինտերակտիվ) հեռարձակման ներդրումը, բնակչությանը լրացուցիչ ծառայությունների մատուցումը: Հանգամանորեն քննարկված չէ:

Թվային հեռուստատեսային հեռարձակման անցումը անհրաժեշտություն կառաջացնի բնակչության համար ձեռք բերել թվային հեռուստատեսային ընդունիչներ կամ գործող անալոգային հեռուստացույցների համար՝ թվային կցորդներ (Set-top-box): Քանի դեռ բնակչության մեծամասնությունը (85-90%) ապահովված չի լինի ընդունիչ սարքերով, անհրաժեշտ կլինի երկրում պահպանել անալոգային հեռարձակման համակարգը: Առանցքային հարց է. Հատկապես աղքատ երկրներում հեռարձակման ավելացման

փոխարեն անջատման ռիսկը: Ոչ մի տեղ կամավոր հետաքրքրությունը բավարար մեծ չի եղել:

Հանրային հեռուստաընկերության կողմից անցկացված սոցիալական հարցման տվյալների համաձայն, 2006 թվականի հունվարի 1-ի դրությամբ, արտերկրի արտադրության հեռուստացույցներ ունի Երևանի բնակչության 100%-ը, իսկ Հայաստանի մնացած տարածքի բնակչության 81.1%-ը: [Կարևորությունը?](#)

Այդ իսկ պատճառով, շուկայի տվյալ հատվածի զարգացման, բնակչությանը մատչելի գներով ընդունիչ սարքերի պահանջմունքի բավարարման և անցումային փուլի կազմակերպման համար պետք է ձեռնարկվեն ինչպես պետական կարգավորման անհետաձգելի միջոցառումներ, այնպես էլ՝ շուկայի մասնակիցների տնտեսապես կշռադատված և հիմնավորված մի շարք գործողություններ: [Ի՞նչ կարգավորիչ միջոցառումներ են սրանք:](#)

ԹՀՏ հեռարձակման ներդրման առաջին փուլում պետք է իրականացվեն իրավական հետևյալ միջոցառումները.

ա) հեռուստածրագրերի սոցիալական փաթեթի ցանկի սահմանում, որի անվճար հեռարձակումը երաշխավորում է պետությունը,

բ) հեռուստածրագրերի անալոգային և թվային հեռարձակման միաժամանակյա գործելու մեխանիզմների ու ժամկետների սահմանումը,

գ) թվային հաղորդիչ և ընդունիչ սարքավորումների ազգային ստանդարտների ընդունում,

դ) Հայաստանի Հանրապետությունում ռադիոձառայությունների միջև ռադիոհաճախականությունների շերտերի բաշխման աղյուսակի և ռադիոհաճախականության տիրույթի հեռանկարային պլանի հաստատում՝ Հեռահաղորդակցության միջազգային միության կողմից ԹԻՎ 1 գոտու համար սահմանված ռադիոհաճախականությունների օգտագործման և բաշխման պայմաններին համապատասխան,

ե) ԹՀՏ հեռարձակման զարգացման համար նախատեսված ռադիոհաճախականության տիրույթի ազատականացման (կոնվերսիայի) միջոցառումների անցկացում,

զ) ԹՀՏ ծրագրերի ստեղծման ու տարածման համար լիցենզավորման տարանջատված ընթացակարգերի սահմանում: Հանրապետությունում գործող լիցենզավորման համակարգը չի ապահովում այս խնդրի համար իրավական հիմքը,

է) շուկայի մասնակիցների՝ օպերատորների, ազգային տեղեկատվական ցանցերի այլ սուբյեկտների և սպառողների միջև հարաբերությունների կարգավորման ամբողջական նորմատիվ-իրավական հիմքի մշակում:

Անալոգային ձևաչափում հեռուստածրագրերի հեռարձակման համակարգերի տեխնիկական հիմքերը, որպես միասնական տեխնոլոգիական համակարգ, գործնականում ներկայիս վիճակով ձևավորվել է 80-ականների վերջերին: Այդ տարիներին արդեն կառուցվել էին հզոր հեռուստատեսային հաղորդիչ և բազմաթիվ վերահաղորդիչ կայաններ՝ համապատասխան ենթակառուցվածքներով: Այս համակարգը սպասարկում է հանրային

հեռուստածրագրերի հեռարձակումը և հիմք է հանդիսանում մասնավոր հեռուստաընկերությունների մեծամասնության համար: Վերերկրյա հեռուստատեսային հեռարձակման համար նախատեսված հաճախականության պաշարը գործնականորեն սպառված է (բացառությամբ հեռավոր մարզերի) և թույլ չի տալիս գործող անալոգային ցանցում ավելացնել հեռուստածրագրերի քանակը:

Բազմածրագրային հեռուստատեսային հեռարձակման հետագա զարգացումը ուղղակիորեն կապված է հեռարձակման թվային ձևաչափին անցնելու հետ:

Որպես ԹՀՏ հեռարձակման ցանցի զարգացման նվազագույն սահմանային ցուցանիշներ, որոնց հասնելուց հետո հնարավոր կլինի սկսել անալոգային հեռուստատեսային հեռարձակման անջատումը և անալոգային հաղորդակների վերափոխումը աշխատանքի թվային ռեժիմի, հետևյալն են.

ա) ԹՀՏ ազդանշանի ընդունման հնարավորության ապահովում բնակչության բացարձակ մեծամասնության համար (99-100%)՝ նրանց մշտական բնակության վայրերում,

բ) երկրի բնակչության ճնշող մեծամասնության ապահովում՝ (85-90%), թվային հեռուստացույցներով կամ անալոգային հեռուստացույցների կցուրդներով՝ ԹՀՏ ազդանշանի ընդունման համար:

Հայաստանի Հանրապետությունում ԹՀՏ հեռարձակման համակարգի ստեղծման ծրագրի իրականացումը թույլ կտա լուծել հետևյալ խնդիրները.

ա) Հանրապետության մուտքը գլոբալ տեղեկատվական հասարակություն,

բ) պետության կողմից մշակույթի և կրթության բնագավառներում սոցիալական գործառույթների իրականացում,

գ) միասնական տեղեկատվական դաշտի ստեղծում, տեղեկատվական անվտանգության ապահովում,

դ) հեռուստատեսային հեռարձակման ցանցի վերափոխում ժամանակակից, տնտեսության մեջ կայուն գործող և շուկայական պայմաններում ինքնազարգացման ներուժով օժտված ցանցի,

ե) բազմածրագրային հեռուստատեսային հեռարձակման ժամանակ տեղեկատվական ռեսուրսների նկատմամբ բնակչության ընդգրկվածության անհամաչափության վերացում և բնակչությանը երաշխավորված իրավահավասար հասանելիության ապահովում,

զ) հաճախականության պաշարի արդյունավետ օգտագործում, եթերում հեռարձակվող հեռուստածրագրերի քանակի ավելացում, ներգործուն (ինտերակտիվ) հեռարձակման ներդրում, բնակչությանը լրացուցիչ ծառայությունների մատուցում, [որո՞նք են այս լրացուցիչ ծառայությունները, դրանք պետք է ավելի շատ քննարկվեն](#),

է) հեռուստատեսության՝ պատկերի և ձայնային ուղեկցման, հաղորդման որակի բարձրացում, անալոգային համակարգերի համեմատությամբ հաղորդման ավելի ցածր հզորության օգտագործում,

թ) որակյալ ընդունման ապահովում շարժական և դյուրակիր ընդունիչներով,

ժ) միասնական մուլտիպլեքսացված թվային հոսքում հեռուստաձրագրերի և լրացուցիչ տվյալների (հասարակական ու մշակութային կազմակերպությունների աշխատանքի, տրանսպորտի երթևեկության չվացուցակի և այլնի վերաբերյալ տեղեկատու տվյալներ, գովազդ, հեռուստաշուկա, հասցեակողմնորոշման հաղորդումներ (ծրագրեր) և այլն) հաղորդում, ինչը կորոշվի շուկայական պահանջարկով և հեռուստատեսային հեռարձակման ցանցի օպերատորների հնարավորություններով,

ժա) տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների բնագավառում աշխատատեղերի ընդլայնման և բարձր որակավորման մասնագիտական ներուժի պատրաստման պայմանների ստեղծում,

ժբ) հայրենական հեռուստաձրագրերի բովանդակության (կոնտենտի) արտադրության զարգացմանը խթանում:

Այս խնդիրների լուծումն ունի կարևոր ժողովրդատնտեսական նշանակություն:

Հայաստանի Հանրապետությունում ներդնելու համար ընդունված եվրոպական ԴՎԲ (Դիջիթալ Վիդեո Բրոդբաստինգ) ստանդարտի ԹՀՏ համակարգը, որը, տարածման միջավայրից կախված, բաժանվում է երեք ստանդարտների՝ ԴՎԲ-S (վերերկրյա ցանցեր), ԴՎԲ-U (արբանյակային ցանցեր), ԴՎԲ-S (մալուխային ցանցեր), ունի նշանակալի առավելություն այլ համակարգերի նկատմամբ այն առումով, որ մշակվել է միասնական նախագծի շրջանակներում, և այդ համակարգի պարամետրերը առավելագույնս միասնականացված են: ԴՎԲ-S համակարգի հեռուստատեսային ազդանշանի հաճախականության պարամետրերը համապատասխանեցված են միջազգայնորեն ընդունված հաճախականությունների աղյուսակին և ապահովում են այդ համակարգի եթերային համատեղելիությունը գործող անալոգային հեռուստատեսային հաղորդումների հետ, ինչը թույլ է տալիս ԹՀՏ ներդնել հեռուստատեսային հեռարձակման համար հատկացված շերտերում, առանց հաճախականությունների պլանի փոփոխման և աշխատող կայանների սահմանափակման:

5. Թվային հեռուստատեսային հեռարձակման ցանցի ներդրման համար հիմնական առաջնահերթ միջոցառումներ

Թվային հեռուստատեսային հեռարձակման ներդրման հետ մեկտեղ կարող են հիմնադրվել նոր հեռարձակող օպերատորներ, հեռարձակման ցանցեր, ցանցերի կառավարման համակարգեր և դրա հետ կապված՝ առաջադրվել իրավական, կազմակերպական և տնտեսական բնույթի նոր պահանջներ:

Նախքան ԹՀՏ հեռարձակման ներդրելը կամ ներդրման առաջին փուլում պետք է իրականացնել հետևյալ օրենսդրական-իրավական միջոցառումները.

ա) հեռուստատեսային հեռարձակման հետ կապված իրավական դաշտի ուսումնասիրություն և անհրաժեշտության դեպքում համապատասխան օրենսդրական փոփոխությունների իրականացում: Այդ փոփոխությունները նպատակաուղղված են

վերացնելու հեռուստատեսային հեռարձակմանը վերաբերող գործող օրենսդրությունում հնարավոր հակասությունները, ինչպես նաև սահմանելու ԹՀՏ հեռարձակման ներդրման իրավական դաշտը: Հնարավոր է առաջանա էլեկտրոնային հաղորդակցության հանրային ցանցի բաղկացուցիչ մաս կազմող հեռուստատեսային ցանցերում իրավահարաբերությունների կարգավորման նոր օրենքի ընդունման անհրաժեշտություն, [Յեռարձակման և հեռահաղորդակցության վերաբերյալ օրենսդրությունը ազդեցությունն են կրում ԹՀՏ հեռարձակման ներդրման անցումից: Երկուսն էլ պետք է ուսումնասիրվեն և միգուցե հեռահաղորդակցության մասին մեկ օրենքը լինի լավագույն լուծումը: Կարելի է անել իրավական փոփոխություններ՝ նոր օրենքի կամ գործող օրենքում փոփոխություններ անելու ձևով.](#)

բ) հեռուստածրագրերի սոցիալական փաթեթի սահմանում: Այս փաթեթում պետք է ներառվեն հեռուստածրագրեր, որոնց հեռարձակումը երաշխավորվում է պետության կողմից: Փաթեթը պետք է սահմանվի ըստ սույն ծրագրի փուլերի, առանձին՝ անալոգային և թվային հեռարձակման ցանցի համար,

գ) ԹՀՏ հեռարձակման ծրագրերի ստեղծման և հեռարձակման համար լիցենզավորման առանձնացված կանոնների սահմանում: Հայաստանի Հանրապետությունում գործող լիցենզավորման համակարգը՝ հեռուստածրագրերի հեռարձակման թվային տեխնոլոգիաների հնարավորությունների նկատառումով, շուկայի այս երկու մասնակից խմբի արդյունավետ կարգավորման համար իրավական հիմք չի ապահովում:

Անհրաժեշտ կլինի սահմանել լիցենզավորման այնպիսի համակարգ, որը թույլ կտա ԹՀՏ հեռարձակման ոլորտում ստեղծել մրցակցային շուկա: Դա կնպաստի մասնավոր ներդրումների ներգրավմանը ԹՀՏ հեռարձակման մեջ: [Շատ կարևոր և շատ դժվար! Յավակնությունը լավն է, բայց պետք է հաշվի առնել բարդությունը:](#)

Մալուխային հեռուստատեսային հեռարձակման օպերատորներին լիցենզիաներ տալիս անհրաժեշտ է նաև պարտադրել նրանց՝ մալուխային հեռուստատեսային համակարգերում հաղորդել հեռուստածրագրերի սոցիալական փաթեթը՝ սպառողներից գանձելով նվազագույն վճար, որը օպերատորներին կփոխհատուցի այս հեռուստածրագրերի հաղորդման շահագործման ծախսերը, [Ներկայումս ի՞նչ է վերաբերում մալուխին: «must-carry» նորմալ էվրոպական ստանդարտն է.](#)

դ) հեռուստատեսային հեռարձակման համար նախատեսված ռադիոհաճախականությունների տիրույթի ազատականացման (կոնվերսիայի) անցկացում: Հաճախականություններ օգտագործող այլ ծառայությունների կողմից ժամանակավորապես զբաղեցրած հաճախականության շերտերի հատկացումը ԹՀՏ հեռարձակմանը հնարավորություն կընձեռի լայնորեն ներդնել վերերկրյա ԹՀՏ հեռարձակում, [Ու՞ր են գնում մնացածները.](#)

ե) որպես անալոգային հեռուստատեսային հեռարձակման դադարեցման չափանիշ համարվում է երկրի բնակչության 85-90%-ի անալոգային հեռուստացույցները թվային

կցորդներով ապահովելը: Չափանիշների սահմանումը և զանգվածային լրատվական միջոցներով դրանց մասին հանրությանն իրազեկումը կձևավորի համապատասխան հասարակական կարծիք, որը կնպաստի անալոգային հեռարձակման ժամկետների, ինչպես նաև անալոգային և թվային ձևաչափերում համատեղ հեռարձակման ծախսերի կրճատմանը:

զ) 2006թ. անալոգային հեռարձակման լիցենզիաների տրամադրման դադարեցում:

Աղյուսակ 1-ում բերված են այն առաջնահերթ օրենսդրական-իրավական միջոցառումները, որոնք անհրաժեշտ է իրականացնել ԹՀՏ ներդրման համար:

Աղյուսակ 1.

Հ/հ	Օրենսդրական-իրավական միջոցառումներ	Կատարման ժամկետներ
1.	Հեռուստատեսային հեռարձակման հետ կապված իրավական դաշտի ուսումնասիրություն և անհրաժեշտության դեպքում համապատասխան օրենսդրական փոփոխությունների իրականացում: «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով նախատեսել դադարեցնել լիցենզիաների տրամադրումը մասնավոր հեռուստառադիոհեռարձակող կազմակերպություններին անցումային շրջանն սկսվելուն զուգընթաց, այն է՝ 2006թ.	2006-2007թ.թ.
2.	ՀՀ կառավարության կողմից հեռուստադրագրերի սոցիալական փաթեթի և դրա հեռարձակման կարգի սահմանում	2007 թ.
3.	ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունում՝ ՀՀՌ-Յ-ի բազայի վրա ԹՀՏ հեռարձակման փորձնական գոտում թվային հեռարձակման կազմակերպման մասին	2007 թ.
4.	ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունում՝ հեռուստատեսային հեռարձակման համար նախատեսված ռադիոհաճախականությունների շերտերի ազատականացման վերաբերյալ	2008թ.
5.	ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունում՝ անալոգային հեռուստատեսային հեռարձակման անջատման սկզբնական շրջանի չափանիշների և ժամկետների վերաբերյալ	2010թ.

Իրավական միջոցառումներից բացի կան նաև մի շարք անհրաժեշտ կազմակերպական-տեխնիկական միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետությունում ԴՎԲ ԹՀՏ հեռարձակման ներդրման համար:

Աղյուսակ 2-ում բերված են այն առաջնահերթ կազմակերպական-տեխնիկական միջոցառումները, որոնք անհրաժեշտ է իրականացնել ԴՎԲ ԹՀՏ ներդրման համար:

Աղյուսակ 2.

Հ/հ	Կազմակերպական-տեխնիկական միջոցառումները	Կատարման ժամկետներ
1.	Հայաստանի Հանրապետությունում ԹՀՏ հեռարձակման զարգացման սխեմայի մշակում	2006-2007թ.թ.
2.	Բյուջետային ֆինանսավորման հատկացում՝ փորձնական գոտում ԴՎԲ ԹՀՏ հեռարձակման համար	2007-2008թ.թ.
3.	Թվային կցորդների մշակման և արտադրության համար տեխնիկական պահանջների ձևավորում	2007թ.
4.	Բյուջետային ֆինանսավորման հատկացում՝ հանրապետության սոցիալապես անապահով խավերի անալոգային հեռուստացույցները թվային կցորդներով ապահովելու համար	2009-2015թթ.

5.	Բյուջետային ֆինանսավորման հատկացում՝ փորձնական գոտու բնակչության առավել անապահով խավին անալոգային հեռուստացույցների թվային կցուրդներով ապահովելու համար	2007-2008թթ.
----	---	--------------

6. Ծրագրի խնդիրների լուծման ուղիները և մեթոդները, առավելությունների և ԹՀՏ հեռարձակմանն անցման խնդիրների լուծման ընթացքում ծագած ռիսկերի գնահատումը

Չնայած, որ աշխարհի ոչ մի երկիր դեռ լիովին չի անցել ԹՀՏ հեռարձակման, սակայն արդեն զուգահեռ (անալոգային և թվային) և թվային հեռարձակման անցման ծրագրերի մշակման զգալի փորձ է կուտակվել:

Եվրոպական երկրների փորձը վկայում է, որ թվայինի անցումը սահմանվում է երկրի խորհրդարանի կամ կառավարության որոշմամբ: Ընդ որում, որոշում ընդունելուց մինչև անալոգային հեռարձակման դադարեցումն ընկած ժամանակահատվածը տարբեր երկրներում տարբեր են՝ 5-ից մինչև 16 տարի:

Ադյուսակ 3-ում բերված են տվյալներ՝ եվրոպական մի շարք երկրներում ԹՀՏ հեռարձակման ներդրման վերաբերյալ:

Ադյուսակ 3.

Երկիրը	ԹՀՏ հեռարձակման ներդրման մասին իրավական ակտի ընդունումը	Կանոնավոր ԹՀՏ հեռարձակման սկիզբը	Անալոգային հեռուստատեսային հեռարձակման ծրագրավորվող անջատումը
Մեծ Բրիտանիա	1996թ. հուլիս	1998թ. նոյեմբեր	2012 թ.
Շվեդիա	1997թ. մայիս	1999թ. սեպտեմբեր	2008 թ.
Իսպանիա	1998թ. հոկտեմբեր	2000թ. մայիս	2007 թ.
Ֆինլանդիա	1996թ. մայիս	2002թ. հոկտեմբեր	2007 թ.
Գերմանիա	2002թ.	2003թ. I եռամսյակ	2010 թ.
Նիդեռլանդներ	1999թ.	2003թ. IV եռամսյակ	2005 թ.
Իտալիա	2001թ.	2004թ. II եռամսյակ	2006 թ.

Միջոցների տնտեսման նպատակով բոլոր երկրներն աշխատում են կրճատել անալոգային և թվային ստանդարտներով համատեղ հեռարձակման փուլի տևողությունը: Յուրաքանչյուր երկրում, որոշումն ընդունելուց հետո, մշակվել է ծրագիր՝ ԹՀՏ հեռարձակման անցման բոլոր ասպեկտների մանրամասն պլանավորմամբ:

Եվրոպական երկրների փորձը ցույց է տալիս, որ.

ա) ԹՀՏ հեռարձակման ներդրումը պետք է իրականացվի կառավարության, հեռուստառադիոընկերությունների, հեռուստածրագրերի հեռարձակման ցանցի

օպերատորների և արդյունաբերության փոխգործակցության հիման վրա,

բ) ԹՀՏ հեռարձակման անցման ֆինանսավորումն իրականացվում է պետական և տեղական բյուջեների միջոցների ներգրավմամբ: Ընդ որում, որքան ցածր է երկրի բնակչության կենսամակարդակը, այնքան ավելի մեծ է պետության մասնակցությունը,

գ) բնակչության, հեռուստածրագրեր արտադրողի, հեռուստածրագրերի հեռարձակման ցանցի օպերատորների և արդյունաբերական կազմակերպությունների շահագրգռվածությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ԹՀՏ հեռարձակման շուկայի մասնակիցների համար մշակել տնտեսական և կազմակերպական խթանման միջոցառումների համալիր:

Հաշվի առնելով բնակչության հիմնական զանգվածի ցածր կենսամակարդակը և մասնավոր հեռուստառադիոընկերությունների ֆինանսական սահմանափակ միջոցները, հանրապետությունում նպատակահարմար է թվային հեռարձակման ներդրման խնդրի լուծումն իրականացնել՝ մուլտիպլեքսացված հեռուստածրագրերի սոցիալական փաթեթի թվային հեռարձակման ներդրման միջոցով, պետական աջակցությամբ:

ԹՀՏ հեռարձակման անցման բոլոր առավելությունները կիրականանան անալոգային հեռարձակումն ամբողջությամբ դադարեցնելուց և ազատված հեռուստատեսային հաճախականության շերտերը թվային ձևաչափում հեռարձակման համար հատկացնելուց հետո:

Ծրագրի իրականացման հիմնական ռիսկերը կապված են զուգահեռ հեռարձակման փուլի ձգձգման հետ: Այո, բայց կարող է անխուսափելի լինել, քանի դեռ լուրջ ֆինանսավորում տրված չէ:

7. ԹՀՏ հեռարձակման ցանցերի ստեղծումը ԴՎԲ ստանդարտով: Ծրագրի իրականացման ֆինանսական ապահովման վերաբերյալ առաջարկություններ

Հեռուստատեսային ազդանշանի վերերկրյա հեռարձակման ցանցի արդիականացումն ու անցումը թվային տեխնոլոգիաների, ներառյալ՝ թվային միացնող գծերի կազմակերպումն ու տարբեր հզորության ռադիոհաղորդիչ սարքավորումների թվայնացումը, հիմնականում իրականացվում են հեռուստածրագրերի հեռարձակման ցանցի շահագործման ու զարգացման համար պատասխանատու օպերատորի կողմից՝ արտաբյուջետային ֆինանսավորման ներգրավման հաշվին, միաժամանակ, պետությունը մասնակցություն է ցուցաբերում՝ [որտեղի՞ց է գալու ֆինանսավորումը, որպեսզի այն հնարավոր մենաշնորհի չստեղծի:](#)

ա) անալոգայինից ԹՀՏ անցման շրջանի կազմակերպմանը,
բ) հեռուստածրագրերի սոցիալական փաթեթի հեռարձակմանը,
գ) բնակչության սոցիալապես անապահով խավերի անալոգային հեռուստացույցները կցուրդներով ապահովելուն:

Թվային հեռարձակման հաղորդիչ կայանների և մալուխային հեռուստատեսության

օգտագործմամբ ԹՀՏ հեռարձակման ցանցերի ստեղծման տարբերակներն են՝

ա) Տարբերակ 1. Դեպի հաղորդիչ կայաններ թվային հեռուստատեսային հեռարձակման ծրագրերի հեռահաղորդման ցանց՝ կապի միկրոալիքային գծերի օգտագործմամբ:

Սույն տարբերակում հաշվի է առնվում Հայաստանի այն առանձնահատկությունը, որ հանրապետության համեմատաբար փոքր տարածքի վրա ստեղծվել և գործում է զարգացած ու ճյուղավորված ռադիոռելեային գծերի (ՌՌԳ) ցանց, որով հեռարձակվում է 2-3 հեռուստածրագիր: ՌՌԳ-ի ընդհանուր երկարությունը կազմում է 1497,8 կմ, որը գործնականում անցնում է հանրապետության բոլոր մարզկենտրոններով ու խոշոր բնակավայրերով: Ելնելով տեխնիկա-տնտեսական նկատառումներից, սեփական արբանյակի բացակայության պայմաններում, թվային տեխնոլոգիաների անցնելիս ՌՌԳ-ի ցանցի օգտագործումը կարող է տալ նշանակալի առավելություններ և տնտեսական օգուտ:

ՌՌԳ-ի ցանցի արդիականացումը կարելի է իրականացնել 3-4 փուլով, սկսած 2007 թվականից, նախ մայրուղային ուղղություններով դեպի Սյունիք, Տավուշ, հանրապետության հյուսիսային մարզեր, ապա՝ ճյուղավորումներով:

Խնդրահարույց է հեռուստածրագրերի մեկ սոցիալական փաթեթը 1-2 արբանյակային ծրագիր ընդունող առանձին բնակավայրեր հասցնելը: Դրանք սահմանամերձ, հիմնական հաղորդակցության ուղիներից կտրված գյուղերն են, որտեղ անալոգային ՌՌԳ-ի կառուցումը համարվում էր աննպատակահարմար: Այնուհանդերձ, հեռուստածրագրերի սոցիալական փաթեթը կարելի է մինչև հաղորդիչ կայաններ հասցնել մայրուղային ՌՌԳ-ի կայաններից լրացուցիչ միկրոալիքային գծեր-ճյուղավորումների շինարարությամբ և օպտիկա-մանրաթելային մալուխային գծերի (ՕՄՄԳ) անցկացմամբ: Վերջինիս դեպքում, ընդունվող հեռուստածրագրերի քանակի ավելացումից բացի, լուծվում է նաև բնակչությանը էլեկտրոնային հաղորդակցության, տվյալների փոխանցման ծառայությունների մատուցման խնդիրը, ինչպես նաև քաղաքացիական նշանակության տեղեկատվությամբ ապահովելու ռազմավարական խնդիրները (հույժ կարևոր հաղորդագրություններ՝ արտակարգ իրավիճակների դեպքում, ճանապարհների վիճակի, եղանակի տեսության և այլն): Դա կնպաստի նաև հանրապետության մարզերի տնտեսական առաջընթացին և բնակավայրերում մարդկանց հաստատվելուն:

Նշված հեռահաղորդման գծերի ընդհանուր երկարությունը՝ 160 հազար բնակչությամբ 218 բնակավայրերի համար, կկազմի մոտ 1720 կմ, որից ՌՌԳ՝ 85 կմ, ՕՄՄԳ՝ 1635 կմ:

Վերերկրյա ԹՀՏ հեռարձակման համար առաջարկվում է գործող անալոգային ռադիոհեռուստատեսային հաղորդիչ ցանցում տեղադրված անալոգային հաղորդակները փոխարինել թվայիններով:

Գործող ցանցի ենթակառուցվածքի օգտագործումը թույլ կտա նվազագույնի հասցնել ԹՀՏ հեռարձակման ցանցի ստեղծման ծախսերը:

Ներկայիս դրությամբ, հեռուստածրագրերի հեռարձակման պետական ցանցում

գործում է 192 կայան՝ 1000 Վտ-ից ավելի հզորությամբ 12 հաղորդակներով, և թվով 294 փոքր հզորության կայաններ: Նշված կայաններում հեռուստառազդերի թվային փաթեթի հեռարձակման համար կարող է հատկացվել մեկական հաճախականության շերտ (կապուղի) ստոկհոլմյան հեռուստատեսային հեռարձակման պլանով նախատեսված IV-V հաճախականության տիրույթներում: Անալոգային հեռուստատեսային հաղորդակները թվայինով փոխարինելիս, միևնույն հզորության դեպքում, կարող են զգալի կրճատվել սպասարկման գոտիները, ըստ այդմ, հնարավոր է, որ բնակչության 100% ընդգրկվածություն ապահովելու համար լրացուցիչ կպահանջվի կառուցել որոշ քանակությամբ նոր, փոքր հզորության թվային կայաններ և իրականացնել հաճախականությունների հատկացում:

Կախված հաճախականությունների հատկացումից՝ հաղորդակների հզորությունների ընտրությունը և սպասարկման գոտիները պետք է ճշգրտվեն ԹՀՏ հեռարձակման զարգացման սխեմայի մշակման փուլում:

Բազմաթիվ բնակավայրերում, որտեղ ներկայումս ընդունվում է մետրային կապուղով հեռարձակվող 2-4 հեռուստառազդի, թվայինի անցնելիս կպահանջվի դեցիմետրային տիրույթի ընդունիչ անտենաների տեղադրում: [Հաճախականության ծրագրի հնարավորություններ կա՞ն: Նոր հաղորդիչներ՞: Շատ կայմե՞ր, ի՞նչ են մտածում մարդիկ:](#)

Վերերկրյա ԹՀՏ հեռարձակման տարբերակում հեռուստատեսային հաղորդակներից հեռարձակվող ազդանշանները կօգտագործվեն հեռուստատեսության կոլեկտիվ ընդունման և մալուխային հեռուստատեսության համակարգերում, որտեղ պետք է տեղադրվեն ընդունիչ-ձևափոխիչներ՝ ԴՎԲ-S-ից ԴՎԲ-Յ: Կոլեկտիվ ընդունման և մալուխային հեռուստատեսության համակարգերին միացված սպառողների վերջնակետային սարքավորումները պետք է ապահովված լինեն թվային հեռուստատեսային ընդունիչներով կամ գործող անալոգային հեռուստացույցների համար՝ թվային ԴՎԲ-Յ կցուրդներով:

Անալոգային և թվային ստանդարտներով համատեղ հեռարձակման ժամանակահատվածում, առկա հաճախականությունների սակավության և եթերի «հագեցվածության» պայմաններում, Երևանում կարող են առաջանալ հաճախականությունների հատկացման դժվարություններ, ինչը պահանջում է ԹՀՏ հեռարձակման անցման բոլոր գործոնների մանրագնին մշակում: [Գործող հաճախականությունները միջնաժամկետ հատվածում չեն կարող ետ վերգվել, եթե հեռարձակողը կամ այլ օգտագործողը չի խախտում լիցենզիայի պայմանները, այս պարագայում հնարավոր է կամավոր փոփոխությունները՝ խթանների վրա հիմնված\):](#)

բ) Տարբերակ 2. Արբանյակային ԹՀՏ հեռարձակման ցանցի ստեղծում՝ կոլեկտիվ ընդունման և մալուխային հեռուստատեսության համակարգերի օգտագործմամբ:

Սույն տարբերակը ենթադրում է ԴՎԲ-Ս ստանդարտով հեռուստառազդերի սոցիալական մեկ փաթեթի հեռարձակումը հանրապետության տարածքում և դրա սահմաններից դուրս՝ արբանյակային ուղղակի հեռուստատեսային հեռարձակմամբ:

Արբանյակային ուղղակի հեռուստատեսային հեռարձակման, հեռուստատեսության

կոլեկտիվ ընդունման և մալուխային հեռուստատեսության համակարգերի օգտագործմամբ ցանցի ստեղծումը ապահովում է ԹՀՏ հեռարձակմամբ հանրապետության տարածքի ու բնակչության ընդգրկման առավելագույն հնարավորություն և չունի հաճախականության ռեսուրսի հետ կապված սահմանափակումներ: Սակայն հաշվի առնելով, որ հանրապետությունում հեռուստատեսության կոլեկտիվ ընդունման և մալուխային հեռուստատեսության համակարգերի միջոցով հեռարձակումը զարգացում չի ստացել, արբանյակային ուղղակի հեռուստատեսային հեռարձակման միջոցով ԹՀՏ ստեղծումը կպահանջի լրացուցիչ ծախսեր և չի լուծի ցանցային խնդիրները: Այս տարբերակում, հեռուստացույցի համեմատաբար էժան կցուրդի փոխարեն, բնակչությունը հարկադրված կլինի ձեռք բերել արբանյակային ընդունիչ սարք և ալեհավաք: [Արբանյակի մալուխային հեռարձակում⁶: Եթե այլ պարամետրերը ավելի լավանան, ապա պետությունը կարող է աջակցել՝ գնելու այսպիսի ընդունիչներ: Սրանք հարցեր են, որոնք կարող են առաջադրվել հանրային քննարկումներում:](#)

գ) Տարբերակ 3. ԹՀՏ ցանցի ստեղծում՝ առաջին երկու տարբերակների համակցության օգտագործմամբ:

Հեռուստածրագրերի ազդանշանի հեռարձակման միջոցների համակցված տարբերակում թվային հաղորդակները տեղակայվում են գործող բոլոր անալոգային կայաններում (Տարբերակ 1):

Արբանյակային ուղղակի հեռուստատեսային հեռարձակման օգտագործմամբ հեռուստածրագրերի սոցիալական փաթեթը ընդունվում է ինչպես նշված կայաններով, այնպես էլ հեռավոր բնակավայրերում տեղակայված վերահաղորդիչներով և հեռուստատեսության կոլեկտիվ ընդունման ու մալուխային հեռուստատեսության համակարգերի միջոցով (Տարբերակ 2):

Այս դեպքում հեռուստածրագրերի սոցիալական փաթեթը հեռավոր բնակավայրեր հասցնելու համար վերանում է եթերային և մալուխային լրացուցիչ կապի գծերի շինարարության բյուջետային ֆինանսավորման անհրաժեշտությունը:

Դեպի մարզեր հեռուստածրագրերի մնացած 2-3 փաթեթի հեռարձակման կազմակերպման, ինչպես նաև տարածաշրջանի այլ ցանցային խնդիրների լուծման համար անհրաժեշտ է իրականացնել գործող ՌՌԳ ցանցի թվայնացում: Հեռուստածրագրերի արբանյակային հեռահաղորդման պահուստավորման համակարգի հաշվին ԹՀՏ հեռարձակման ցանցի ստեղծումն ապահովում է մեծ հուսալիություն:

Ծրագրի աշխատանքների այս հատվածը իրականացվում է օպերատորների միջոցների հաշվին: [\(Ցանկանում ե՞ն և ի վիճակի ե՞ն: Ի՞նչ երաշխիքներ ապագա լիզենզիաների համար:\)](#)

Հիմնվելով իրականացված վերլուծության վրա՝ Հայաստանի Հանրապետությունում ԹՀՏ հեռարձակման ներդրման համար առաջարկվում է կիրառել տարբերակ 3-ը, որը անցման շրջանի ավարտից հետո թույլ կտա ամբողջ ծավալով իրականացնել ԹՀՏ հեռարձակման

առավելությունները: [Հանրային խորհրդակցություններ՝ առնվազն ներգրավված ոլորտից կարծիք ստանալու համար:](#)

Հայաստանի Հանրապետությունում ԹՀՏ հեռարձակման ցանցի ներդրման ընդհանուր ծախսը կազմում է 15.0 մլրդ. դրամ, որից բյուջետային ֆինանսավորումը՝ 6.4 մլրդ. դրամ:

Հաշվարկում չեն ներառվել հետևյալ ծախսերը.

ա) մասնավոր հեռուստառադիոընկերությունների ապարատաստուղիական համալիրների վերազինման արժեքը, [\(պարզ չէ, թե ինչպես է ֆինանսավորվելու սա, ակնկալվում է պետական սուբսիդիաներ\)](#)

բ) սարքավորումների արժեքը՝ հեռուստածրագրերի լրացուցիչ փաթեթների համար,

գ) բնակչության համար թվային ընդունիչների արժեքը: [\(սա կարևոր է!\)](#)

Ծախսերի հաշվարկի արդյունքները բերված են աղյուսակ 4-ում:

Տարբերակների մանրագնին մշակումը և համադրումը անցումային փուլում (2006-2007թթ.) պետք է կատարվի Հայաստանի Հանրապետությունում ԹՀՏ հեռարձակման զարգացման սխեմայի և թվային վերերկրյա հաղորդիչ կայանների համար տարածաշրջանային հաճախականության պլանների մշակման փուլում:

Հեռուստատեսության կոլեկտիվ ընդունման համակարգերի վերակառուցումը պետք է իրականացվի հեռուստատեսային հեռարձակման ցանցի օպերատորների կողմից, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է ստանան մալուխային հեռուստատեսության ծառայությունների մատուցման լիցենզիա: Դա թույլ կտա ԹՀՏ հեռարձակման ոլորտում ստեղծել գործունեության շուկայական պայմաններ: Նպատակահարմար է նշված օպերատորներին պարտավորեցնել ԹՀՏ հեռարձակման կենցաղային ընդունիչ սարքավորումների սպասարկումը: [Սրանք գործող լիցենզիաներ են, թե՞ լինելու է լիցենզավորման նոր գործընթաց: Իրավական հստակություն և միջին ժամկետում պայմանների չփոփոխում:](#)

8. ԹՀՏ հեռարձակման ներդրման համար հաճախականությունների ապահովման վերաբերյալ առաջարկություններ: Հայաստանի Հանրապետությունում ԹՀՏ հեռարձակման անցումային փուլում հաճախականությունների պլանավորման վերաբերյալ հարցեր: Ռադիոհաճախականության սպեկտրի անհրաժեշտ ռեսուրսի գնահատում

Ռադիոհաճախականության տիրույթի կառավարումը և ռադիոէլեկտրոնային միջոցների օգտագործման համար հաճախականությունների հատկացումը պետության կարևորագույն գործառնություններից մեկն է: Այն պետք է իրականացվի ինչպես միջազգային մակարդակում՝ հաճախականության ազգային պաշարի պաշտպանության նպատակով, այնպես էլ ներպետական մակարդակում՝ հանրապետությունում ռադիոծառայությունների գործունեության պայմանների ապահովման և նոր ռադիոտեխնոլոգիաների զարգացման նպատակով: Այս խնդիրների լուծման համար պետք է համալիր կիրառվեն կառավարման ինչպես վարչական, այնպես էլ տնտեսական բոլոր մատչելի լծակները:

Հայաստանի Հանրապետության տարածքը վերերկրյա ԹՀՏ հեռարձակմամբ ապահովելու համար ռադիոհաճախականության տիրույթի անհրաժեշտ ռեսուրսի գնահատումը

Ներկայումս, Ստոկհոլմի 1961թ. պլանին համապատասխան, Եվրոպայում հեռուստատեսային հեռարձակման համար օգտագործվում են հաճախականությունների հետևյալ հինգ տիրույթները.

- ա) I (47-68 ՄՀգ),
- բ) II (76-100 ՄՀգ)՝ միայն արևելատեղափոխական երկրներում,
- գ) III (174-230 ՄՀգ),
- դ) IV (470-582 ՄՀգ),
- ե) V (582-862 ՄՀգ):

Այս նույն տիրույթներն օգտագործվում են նաև ԹՀՏ հեռարձակման համար: Շատ երկրներում վերերկրյա թվային հեռարձակման հաճախականությունների որոշման համար անցկացված հետազոտությունները ցույց են տվել, որ արդյունաբերական խանգարումների մակարդակը I (47-68 ՄՀգ) տիրույթում զգալիորեն բարձր է, քան այլ հեռուստատեսային տիրույթներում և թվային համակարգերում կարող է հարուցել անկանխատեսելի խափանումներ: Այդ պատճառով I տիրույթը ԹՀՏ հեռարձակման համար հարմար չէ, և այն նպատակահարմար է օգտագործել անալոգային համակարգերի աշխատանքի շարունակման համար: II տիրույթը (3-րդ, 4-րդ և 5-րդ հեռուստատեսային կապուղիները) ներկայումս արևելատեղափոխական երկրներում և Հայաստանում մասնակիորեն օգտագործվում է ձայնային հեռարձակման համար (87.5-100.0 ՄՀգ), իսկ 76-87.5 ՄՀգ հատվածը՝ հեռուստատեսային հեռարձակման համար (3-րդ հեռուստատեսային կապուղի), շարժական և ֆիքսված ռադիոժառայությունների կողմից: Ըստ այդմ, ԹՀՏ հեռարձակումը Հայաստանում պետք է իրականացվի III, IV և V տիրույթներում:

Ռադիոհաճախականության տիրույթին բոլոր երկրների իրավահավասար հասանելիությունն ապահովելու նպատակով Հեռահաղորդակցության միջազգային միության կողմից Թիվ 1 գոտում (որի մեջ մտնում է նաև Հայաստանը) անցկացվել է ԹՀՏ և թվային ձայնային հեռարձակման հաճախականությունների միջազգային պլանի մշակման հարցերով Տարածաշրջանային ռադիոհաղորդակցության կոնֆերանս (Ռ-Ռ-Ց-04/06):

Այդ կոնֆերանսի որոշումների համաձայն՝ III տիրույթը պլանավորվում է օգտագործել ԹՀՏ (ԴՎԲ-S) և թվային ձայնային (S-ԴԱԲ) հեռարձակման կազմակերպման համար: Հեռարձակման այս տեսակների միջև համամասնությունը որոշվում է ազգային մակարդակում: IV և V տիրույթները առանձնացված են միայն հեռուստատեսային հեռարձակման համար: Կոնֆերանսի ընթացքում մշակված հաճախականությունների պլանները կսահմանեն առաջիկա տասնամյակների ընթացքում յուրաքանչյուր երկրի հաճախականության ռեսուրսը՝ թվային հեռարձակման զարգացման համար:

ԹՀՏ հեռարձակման ներդրումը ենթադրում է անալոգային համակարգից թվայինի՝ անցումային փուլի առկայություն, երբ միաժամանակ կգործեն անալոգային և թվային կայանները: Ընդ որում, անալոգային հեռարձակումը պետք է պաշտպանված լինի տեղակայվող թվային հաղորդակների խանգարումներից:

Անցումային փուլում առավելագույնս կզգացվի հաճախականության կապուղիների սակավությունը: Ներկայումս, հանրապետության մի շարք տարածքներ արդեն իսկ սպառել են առկա հաճախականության ռեսուրսը, և անալոգային հեռարձակման համար նոր կապուղիների հատկացումը հնարավոր չէ, իսկ ԹՀՏ հեռարձակման համար կարելի է հատկացնել կապուղիներ՝ ճառագայթվող հզորությունների զգալի սահմանափակմամբ: Այս պայմաններում տիրույթի ազատականացման խնդիրը դառնում է որոշիչ:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն կապուղիների օգտագործման հնարավորությանը, որոնք ներկայումս զբաղեցված են հեռուստածրագրեր չհեռարձակող կազմակերպությունների կողմից:

Անալոգային և թվային վերերկրյա հեռուստատեսային հեռարձակման համատեղ գոյության անցումային փուլում առավել իրատեսական է թվային հաղորդակների տեղակայումը գործող ռադիոհեռուստատեսային հաղորդիչ կենտրոններում, քանի որ նման մոտեցման դեպքում օգտագործվում են հեռուստատեսային ցանցի ինչպես գործող ենթակառուցվածքները, այնպես էլ ընդունիչ անտենային համակարգերը, և զգալիորեն նվազում է ներդրումների անհրաժեշտ ծավալը:

Հայաստանում ռադիոհաճախականությունների շերտերի ազգային բաշխումը էապես տարբերվում է միջազգայինից, որը հաստատված է Հեռահաղորդակցության միջազգային միության ռադիոկապի կանոնակարգով, և որով նախատեսված են ռադիոկապի և հեռարձակման տեխնոլոգիաների ներդրման առավել բարենպաստ պայմաններ: Այս տարբերությունները և դրանցից բխող հետևանքները Հայաստանում պայմանավորված են այն հանգամանքով, որ ռադիոհաճախականությունների տիրույթը առավելապես օգտագործվում է ռազմական և հատուկ նշանակության ռադիոէլեկտրոնային միջոցների համար: [Այս հարցը կարևոր է և համապատասխան կողմերը պետք է ներգրավված լինեն: Պաշտպանության նախարարությունը և գինվորականները հակառակ պարագայում կարող են կանգնեցնել լավ ծրագիրը:](#)

Ստեղծված իրավիճակում հնարավոր է միայն մեկ լուծում՝ ԹՀՏ հեռարձակման համար մշակել հաճախականության պլաններ՝ օգտագործելով նաև ներկայումս անհասանելի կապուղիները: Դա հնարավորություն կտա միջազգային մակարդակում պաշտպանել ԹՀՏ հեռարձակման համար նախատեսված հաճախականության ռեսուրսը՝ հեռարձակման ծառայությունների կողմից հետագա օգտագործման նպատակով: Ընդ որում, պետք է գիտակցել, որ այս կապուղիների օգտագործումը հնարավոր կլինի միայն ազատականացման միջոցառումների իրականացման արդյունքում:

Ծրագիրը մշակելիս, հաճախականությունների առկա սահմանափակումների

սպայմաններում, անցկացվել է Հայաստանում գործող տարբեր հզորության վերերկրյա անալոգային հեռուստատեսային հաղորդիչ կայաններում ԹՀՏ հեռարձակման համար մեկական կապուղու հատկացման հնարավորությունների նախնական ուսումնասիրություն:

ԹՀՏ հաղորդիչ կայանների սպասարկման գոտիների զգալի կրճատումը որոշ դեպքերում դրանց տեղակայումը դարձնում է տնտեսապես չարդարացված: Ռ-ադիոհաճախականությունների տիրույթի ազատականացումից հետո կստեղծվի ԹՀՏ մեծ հզորության հաղորդակների համար հաճախականությունների հատկացման հնարավորություն, և անալոգային ու ԹՀՏ հաղորդիչ կայանների սպասարկման գոտիների տարբերությունը կարող է նվազել: Անալոգային հեռարձակման դադարեցումից և III տիրույթի ազատված հեռուստատեսային կապուղիները ԹՀՏ հեռարձակմանը հատկացվելուց հետո կարող են իրացվել ԹՀՏ հեռարձակման սպասարկման գոտիներ, որոնք համադրելի կլինեն անալոգային կայանների գոտիների հետ:

Հաշվի առնելով հաճախականության կապուղիների սակավությունը, անհրաժեշտ է անցումային փուլում դադարեցնել հեռուստառադիոհեռարձակման լիցենզիաների հատկացումը մասնավոր հեռուստառադիոընկերություններին՝ մինչև տվյալ տարածքի համար հեռուստածրագրերի սոցիալական փաթեթի հեռարձակման անհրաժեշտ հաճախականությունների կապուղիների առանձնացումը: [Գործող լիցենզիաների նորագու՞մ: Մորատորիան, որպես այդպիսին լավ է, բայց այլ չպետք է լինի չափից երկար և երբեք կամայական, իրավական հստակություն:](#)

Ռ-ադիոտիրույթի ուղեծրա-հաճախականային ռեսուրսի գնահատումը և զարգացման հեռանկարը

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան ուղեծրա-հաճախականային ռեսուրս: Հեռուստածրագրերի հեռարձակումը սովորաբար իրականացվում է ֆիքսված արբանյակային ծառայություններ մատուցող տիեզերական սարքերով (արբանյակներով): Մույն Ծրագրով նախատեսված է նաև հեռուստածրագրերի հեռարձակման հնարավորություն հեռարձակման արբանյակային ծառայություններ մատուցող արբանյակների միջոցով՝ հեռուստատեսության կոլեկտիվ ընդունման համակարգերի կամ անհատական օգտվողների համար:

Հեռարձակման արբանյակային ծառայությունների համար նախատեսված տիրույթում միջազգային կոորդինացման համաձայնագրերով Հայաստանի Հանրապետության կապի վարչակազմին հատկացված է երկու ուղեծրային դիրք՝ գեոստացիանար ուղեծրի վրա: Առաջին դիրքում հատկացված է 10-ը կապուղի հեռուստահեռարձակման համար: Երկրորդ դիրքը նախատեսված է ֆիքսված արբանյակային ծառայությունների համար: [Պետք է օգտագործել դրանք, ոչ մի մշտական վերապահում, որպես այդպիսին:](#)

9. Հայաստանի Հանրապետությունում ԴՎԲ ԹՀՏ հեռարձակման ներդրման համար

անհրաժեշտ կազմակերպա-տեխնիկական միջոցառումներ

Հայաստանի Հանրապետությունում ԴՎԲ ԹՀՏ հեռարձակման ներդրման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ կազմակերպա-տեխնիկական միջոցառումները.

ա) մշակել ԹՀՏ հեռարձակման զարգացման սխեման, որը պետք է ավարտվի 2008թ.;

բ) մշակել նորմատիվ-տեխնիկական ակտեր և համապատասխան ստանդարտներ՝ անալոգային հեռուստատեսային ընդունիչների թվային կցուրդների արտադրության համար; [Եվրոպական ստանդարտներ, սեփական չանել.](#)

գ) հաշվի առնելով, որ բացի արտասահմանյան արտադրության կցուրդների վաճառքից և ներմուծումից, նման արտադրություն կարող է կազմակերպվել նաև Հայաստանում: Այս ստանդարտների մշակումը պետք է ավարտվի 2007թ.;

դ) փորձնական գոտու բնակչությանը ապահովել հեռուստացույցների թվային կցուրդներով՝ թվային եթերային վերերկրյա հեռուստատեսային հեռարձակման համակարգում ծրագրերի ընդունման համար: Այս միջոցառումը պետք է իրականացվի 2007-2008թթ. ընթացքում, մինչև 100%-անոց ապահովումը; [\(սրա ֆինանսավորումը ներառում է վարչական ծախսերը\)](#)

ե) 2007-2012թթ. ընթացքում հատկացնել բյուջետային ֆինանսավորում՝ բնակչության սոցիալապես անապահով խավի անալոգային հեռուստացույցները կենցաղային թվային կցուրդներով ապահովելու համար: [\(սրա ֆինանսավորումը ներառում է վարչական ծախսերը\).](#)

Հեռարձակման թվային ֆորմատի անցնելիս ցանցի օպերատորները և այլ շահագրգիռ անձիք կարող են ակտիվ համագործակցել առաջատար արտասահմանյան այնպիսի ֆիրմաների հետ, ինչպիսիք են՝ Թհալես Բրոդքաստ ընդ Մուլտիմեդիա ՍԱ, ՆԵՔ Կորպորացիոն, Հարիս Կորպորացիոն, Տելեֆունկեն, Տեյնբեռզ Տելեվիզիոն Լտդ, Սքոպուս Նեթվորք Տեխնոլոջես Լտդ, Ռոդե ընդ Շվարց ԳմբՀ, Տեխնոսիստեմ Ս.պ.Ա., Տեսլա, Սքրին ՍԵրվիս, Տելասս Ինստրումենթս, Ֆիլիպս և այլն:

Այս համագործակցությունը կարող է արտահայտվել տարբեր ձևերով.

ա) արտասահմանյան ֆիրմաների սարքավորումների ձեռք բերում

բ) արտասահմանյան ֆիրմաների տեխնոլոգիական սարքավորումների ձեռք բերում

գ) արտասահմանյան ֆիրմաների էլեկտրոնային կոմպոնենտների /բաղադրամասերի/ բազայի ձեռք բերում

դ) համատեղ ձեռնարկությունների ստեղծում

ե) փոխադարձ խորհրդատվությունների անցկացում և փորձի փոխանակում: [\(Կապել կա՞ն: Հետաքրքրություն կա՞: Չխոստանալ նրանց այն, ինչ չի կարող խոստացվել: Հաշվի առնել նաև ծրագրում ընկերություններին անուններով կոչելու մրցակցային օրենքի դրույթները:\)](#)

10. Ծրագրի իրագործման փուլերը և ժամկետները

Նախատեսվում է ծրագիրն իրականացնել 4 փուլով՝ մեկ նախապատրաստական և երեք հիմնական փուլ.

նախապատրաստական փուլ՝ 2006-2007թթ.

ա) 1-ին փուլ՝ 2007-2008 թթ.

բ) 2-րդ փուլ՝ 2009-2012 թթ.

գ) 3-րդ փուլ՝ 2013-2015 թթ.

Նախապատրաստական փուլը ներառում է միջոցառումներ, որոնց անցկացումը թույլ կտա ԹՀՏ հեռարձակման ներդրումն սկսել 2007թ.:

Առաջին փուլում (2007-2008 թթ.) պետք է սկսվի փորձնական գոտում ԹՀՏ հաղորդակների տեղակայումը՝ օգտագործելով վերերկրյա անալոգային հեռուստատեսային հեռարձակման գործող ցանցի ենթակառուցվածքները, վերերկրյա ԹՀՏ հեռարձակումը և 4-5 հանրային և մասնավոր հեռուստաընկերությունների հեռուստածրագրերի ազդանշանների տարածումն այդ գոտում: [Փորձնական ծրագիրը բավականին կարճ է, բայց մյուս կողմից լավ է համընթաց հեռարձակման չափից երկար ժամանակ չունենալը:](#)

Երկրորդ փուլում (2009-2012թթ.) պետք է սկսվի վերերկրյա ԹՀՏ հեռարձակումը Երևան և Գյումրի քաղաքներում, ինչը թույլ կտա Հայաստանի բնակչության 65%-ին ապահովել ԹՀՏ հեռարձակմամբ: Փուլի վերջում այդ քաղաքների ողջ բնակչությունը պետք է ապահովված լինի անալոգային հեռուստացույցների թվային կցուրդներով: Նույն ժամանակաշրջանում կշարունակվի վերերկրյա ԹՀՏ հեռարձակման ներդրումը՝ թվային հեռարձակման ոլորտում ծառայություններ մատուցող հեռուստաընկերությունների ծրագրերին համապատասխան: Սկսվում է մասնավոր հեռուստածրագրերի անցումը թվային վերերկրյա հեռարձակման, այդ թվում՝ կոմպրեսիայի առավել արդյունավետ մեթոդների և հեռուստատեսային ազդանշանների հաղորդման օգտագործմամբ:

Երրորդ փուլում (2013-2015թթ.) դադարեցվում է անալոգային հեռարձակումը և Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ավարտվում է մասնավոր հեռուստաընկերությունների հեռուստածրագրերի հեռարձակման անցումը թվային վերերկրյա հեռարձակման:

11. Ծրագրի իրականացման սպասվելիք արդյունավետության գնահատումը

Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվեն անհրաժեշտ նախադրյալներ Հայաստանի Հանրապետությունում ԹՀՏ հեռարձակման արագացված ներդրման և զանգվածային տարածման համար՝ ԴՎԲ ստանդարտի բոլոր տարբերակներով (ԴՎԲ-S և դրա ԴՎԲ-Հ տարատեսակը՝ նախատեսված շարժական ընդունիչների համար, ինչպես նաև ԴՎԲ-Ս և ԴՎԲ-Ց):

Ծրագրի իրականացումը թույլ կտա.

ա) հասնել հեռուստածրագրերի հեռարձակման ցանցի զարգացման եվրոպական երկրների հետ համադրելի ցուցանիշների,

բ) վերացնել առկա անհավասարությունը բնակչությանը հեռուստատեսային հեռարձակմամբ ապահովելու ոլորտում և ստեղծել անհրաժեշտ պայմաններ տեղեկատվության նկատմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սահմանադրական իրավունքները իրականացնելու համար, [սա մեծապես կախված է, թե ինչ է այիքներում](#)

գ) ապահովել մրցակցային միջավայրի հետագա զարգացումը հեռուստատեսային հեռարձակման ծառայությունների ոլորտում,

դ) բարեփոխել հեռուստածրագրերի հեռարձակման ցանցը ժամանակակից, տնտեսության մեջ կայուն գործող և շուկայական պայմաններում ինքնազարգացման ներուժով օժտված ցանցի, [Նրանց գումար հատկազնել նորամուծությունների և ներդրումների համար, հատկապես վաղ փուլում և նրանցից շատ փոքի ակնկալիքներ չունենալ](#)

ե) բարձրացնել ճյուղի ներդրումային գրավչությունը, ավելացնել հեռուստատեսային հեռարձակման ոլորտում ծառայությունների մատուցումից ստացվող հարկերի մուտքերը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

12. Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրներ կարող են հանդիսանալ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հեռուստաընկերությունների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից երաշխավորվող ներդրումները: Անցումային փուլում կարող են գործել ֆինանսական աջակցության անուղղակի մեխանիզմներ: Օրինակ՝ ծրագրի մասնակիցներին տրված հարկային արտոնություններ, պետական վարկեր, պետական բաժնեմասերի մասնավորեցում (ապապետականացում և այլն: [Նշել աջակցության կանոնները](#)

Աղյուսակ 4.

N	Միջոցառումների, աշխատանքների անվանումը	Կատարման ժամկետը	Ծախսերը, մլն. դրամ		
			ընդամենը	պետական բյուջեի միջոցներ	ներգրավված միջոցներ

1.	Հայաստանի Հանրապետությունում Թ-ՀՏ հեռարձակման զարգացման սխեմայի մշակում	2006-2007թթ	50.0	50.0	-
2.	ԴՎԲ-Տ ստանդարտով փորձնական թվային հեռարձակման գոտու ստեղծում Վանաձորում (4 հեռուստաձրագիր) , այդ թվում` ԴՎԲ-Տ թվային 200Վտ-ոց հաղորդակի և անտենա- մալուխային համակարգի ձեռքբերում և տեղադրում ազդանշանների թվայնացման համակարգերի ձեռքբերում և տեղադրում (կողեր, մուլտիպլեքսեր) բնակչության առավել անապահով խավերին հեռուստացույցերի թվային կցուրդների (6000 կցուրդ) անվճար տրամադրում	2007-2008թթ	136.8 24.3 18.0 94.5	136.8 24.3 18.0 94.5	- - - -
3.	Արբանյակային հաղորդիչ կայանի կառուցում` հեռուստաձրագրերի սոցիալական փաթեթի արբանյակային հեռարձակումը կազմակերպելու համար	2010թ.	120.0	120.0	-
4.	Արբանյակային ունակության վարձակալում` հեռուստաձրագրերի սոցիալական փաթեթի արբանյակային հեռարձակումը կազմակերպելու համար	սկսած 2011թ-ից	540.0 տարեկան	540.0 տարեկան	-

5.	<p>Հեռուստածրագրերի սոցիալական փաթեթի հեռարձակման նպատակով 200 հեռուստակայանների համար համապատասխան հզորությամբ մեկական ԴՎԲ-S թվային հաղորդակի և լրակազմի ձեռքբերում և տեղադրում (191 գործող կայաններ), այդ թվում՝</p> <p>5000 Վտ. 3 հատ՝ յուրաքանչյուրը 197.0 մլն. դրամ</p> <p>1000 Վտ. 4 հատ՝ յուրաքանչյուրը 47.0 մլն. դրամ</p> <p>100 Վտ. 48 հատ՝ յուրաքանչյուրը 12.6 մլն. դրամ</p> <p>10 Վտ. 136 հատ՝ յուրաքանչյուրը 7.7 մլն. դրամ</p> <p>10 Վտ. լրացուցիչ 9 հատ՝ յուրաքանչյուրը 7.7 մլն. դրամ</p>	2009-2015թթ	2 500.0	2 500.0	-
6.	<p>Հեռուստածրագրերի սոցիալական փաթեթի ընդունման նպատակով 200 հեռուստակայանների համար ԴՎԲ-Ս արբանյակային ընդունիչ համակարգերի ձեռքբերում և տեղադրում</p>	2009-2015թթ	63.0	63.0	-
7.	<p>Հեռուստացույցերի թվային կցուրդների ձեռքբերում և անվճար տրամադրում բնակչության առավել անապահով խավերին (210 հազար կցուրդ)</p>	2009-2015թթ	3 307.5	3 307.5	-
8.	<p>Գործող 1497.8 կմ ընդհանուր երկարությամբ ռադիոռելեային գծերի թվայնացում՝ դեպի մարզեր 2-3 թվային փաթեթի հեռարձակման կազմակերպման և տարածաշրջանի այլ ցանցային խնդիրների լուծման համար, այդ թվում՝</p>	2009-2015թթ	3 700.0	-	3 700.0

	մայրուղային ռադիոռելեային գծեր, ճյուղավորումներ, ներգործուն (ինտերակտիվ) ցանցեր	2009-2012թթ 2013-2015թթ 2013-2015թթ	2 700.0 840.0 160.0	- - -	2 700.0 840.0 160.0
9.	Սահմանամերձ, հիմնական հաղորդակցման ուղիներից կտրված բնակավայրերում ռադիոռելեային կամ օպտիկաթելային գծերի անցկացում, այդ թվում` ռադիոռելեային գծեր` 85կմ, օպտիկա-մանրաթելային գծեր` 1720կմ	2013-2015թթ	4 300.0 240.0 4 060.0	- - -	4 300.0 240.0 4 060.0
10.	Մարզկենտրոններում, խոշոր բնակավայրերում լրացուցիչ մասնավոր հեռուստածրագրերի հեռարձակման համար համապատասխան հզորությամբ ԴՎԲ-S թվային հաղորդակների և լրակազմերի ձեռքբերում և տեղադրում, այդ թվում` 1000 Վտ. 7 հատ` յուրաքանչյուրը 47.0 մլն. դրամ, 100 Վտ. 22 հատ` յուրաքանչյուրը 12.6 մլն. դրամ	2013-2015թթ	606.2 329.0 277.2	- - -	606.2 329.0 277.2
11.	Հեռուստածրագրերի սոցիալական փաթեթի կոլեկտիվ ընդունման մալուխային ցանցերի կազմակերպում մայրաքաղաքի առավել խիտ կառուցապատված տարածքներում (80 համակարգ, յուրաքանչյուրը 2.25 մլն. դրամ)	2013-2015թթ	180.0	-	180.0

12.	Մալուխային հեռուստատեսային հեռարձակման գլխամասային կայաններում հեռուստաձրագրերի սոցիալական փաթեթի հեռարձակման համար պրոֆեսիոնալ ընդունիչների ձեռքբերում և տեղադրում (30 ընդունիչ՝ յուրաքանչյուրը 0.7 մլն. դրամ)	2013-2015թթ	21.0	-	21.0
13.	Կադրերի վերապատրաստում արտերկրում	2007-2012թթ	34.0	34.0	-
ԸՆԳԱՄԵՆԸ 2007-2015 թթ-ին՝				15 018.5 մլն. դրամ	Հաշվարկում ներառված չէ արբանյակային ունակության վարձակալման տարեկան 540.0 մլն. դրամ գումարը:
այդ թվում՝ բյուջետային ֆինանսավորում՝				6 211.3 մլն. դրամ	
ներգրավված միջոցներ՝				8 807.2 մլն. դրամ	

Աղյուսակ 4.1

N	Աշխատանքների իրականացման փուլը	Կատարման ժամկետը	Ծախսը, մլն. դրամ		
			ընդամենը	պետական բյուջեի միջոցներ	ներգրավված միջոցներ
Նախապատրաստական փուլ		2006-2007թթ	50.0	50.0	-
1.	Հայաստանի Հանրապետությունում ԹՀՏ հեռարձակման զարգացման սխեմայի մշակում		50.0	50.0	-
1-ին փուլ		2007-2008թթ	152.8	152.8	-
2.	ԳՎԲ-Տ ստանդարտով թվային հեռարձակման փորձնական գոտու ստեղծում Վանաձորում (4 հեռուստաձրագիր),		136.8	136.8	-
3.	Կադրերի վերապատրաստում արտերկրում		16.0	16.0	-
2-րդ փուլ		2009-2012թթ	5 381.8	2 681.8	2 700.0

4.	Հեռուստաձրագրերի սոցիալական փաթեթի հեռարձակման համար 5000Վտ հզորությամբ մեկական ԴՎԲ-S թվային հաղորդակի և լրակազմի ձեռքբերում և տեղադրում Երևանում և Գյումրիում		394.0	394.0	-
5.	Հեռուստացույցերի թվային կցուրդների ձեռքբերում և անվճար տրամադրում բնակչության առավել անապահով խավերին (137 հազար կցուրդ)		2 149.8	2 149.8	-
6.	Արբանյակային հաղորդիչ կայանի կառուցում՝ հեռուստաձրագրերի սոցիալական փաթեթի արբանյակային հեռարձակում կազմակերպելու համար		120.0	120.0	-
7.	Գործող մայրուղային ռադիոռելեային գծերի թվայնացում		2 700.0	-	2 700.0
8.	Կադրերի վերապատրաստում արտերկրում		18.0	18.0	-
3-րդ փուլ		2013-2015թթ	9 433.9	3 506.7	5 927.2
9.	189 հեռուստակայաններում հեռուստաձրագրերի սոցիալական փաթեթի հեռարձակման համար համապատասխան հզորությամբ մեկական ԴՎԲ-S թվային հաղորդակի և լրակազմի ձեռքբերում, տեղադրում		2 106.0	2 106.0	-
10.	200 հեռուստակայաններում հեռուստաձրագրերի սոցիալական փաթեթի ընդունման համար ԴՎԲ-U արբանյակային ընդունիչ համակարգերի ձեռքբերում և տեղադրում		63.0	63.0	-
11.	Հեռուստացույցերի թվային կցուրդների ձեռքբերում և անվճար տրամադրում բնակչության առավել անապահով խավերին (73 հազար կցուրդ)		1 157.7	1 157.7	-
12.	Ռադիոռելեային գծերից ճյուղավորումների թվայնացում և ներգործուն ցանցերի կազմակերպում		1 000.0	-	1 000.0

13.	Մահմանամերձ, հիմնական հաղորդակցման ուղիներից կտրված բնակավայրեր ռադիոռելեային կամ օպտիկաթելային գծերի անցկացում		4 300.0	-	4 300.0
14.	Մարզկենտրոններում, խոշոր բնակավայրերում լրացուցիչ մասնավոր հեռուստածրագրերի հեռարձակման համար համապատասխան հզորությամբ ԴՎԲ-S թվային հաղորդակների և լրակազմերի ձեռքբերում և տեղադրում		606.2	-	606.2
15.	Հեռուստածրագրերի սոցիալական փաթեթի կոլեկտիվ ընդունման մալուխային ցանցերի կազմակերպում մայրաքաղաքի առավել խիտ կառուցապատված տարածքներում		180.0	180.0	-
16.	Մալուխային հեռուստատեսային հեռարձակման գլխամասային կայաններում հեռուստածրագրերի սոցիալական փաթեթի պրոֆեսիոնալ ընդունիչների տեղադրում		21.0	-	21.0
Հաշվարկում ներառված չէ արբանյակային ունակության վարձակալման տարեկան 540.0 մլն. դրամ գումարը					

III. Ռադիո (ձայնային) հեռարձակում

13. Հայաստանի Հանրապետությունում ռադիոհեռարձակման համակարգի վիճակի բնութագիրը: Ռադիոհեռարձակմամբ բնակչության ընդգրկվածության ցուցանիշները:

Հայաստանի Հանրապետությունում ռադիոհեռարձակումը գործնականում իրականացվում է գերկարճալիք (ԳԿԱ), կարճալիք (ԿԱ), միջին ալիք (ՄԱ) և երկար ալիք (ԵԱ) տիրույթներում: Հանրային ռադիոընկերության մեկ ծրագիրը սփռվում է արտերկրում արբանյակային հեռարձակմամբ:

Մայրաքաղաքում և առանձին մարզերում գործում է լարային ռադիոն:

FM ցանցի միջոցով հանրապետության բնակչության ընդգրկվածությունը հանրային ռադիոընկերության ծրագրով կազմում է 92 %:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված է մինչև 2006թ. վերջը տեղակայել ևս 65 փոքր հզորության հաղորդակ, ինչը թույլ կտա ռադիոհաղորդումներով ապահովել հանրապետության ողջ բնակչությանը:

Մասնավոր ռադիոընկերությունների ծրագրերով բնակչության ընդգրկվածությունը կազմում է 79.5 %:

Հանրային ռադիոընկերության ծրագրերի հեռարձակումը կազմակերպելու համար հանրապետությունում գործում է 250÷1000 Վտ հզորության թվով 18 հաղորդակ, որոնք

տեղակայված են ռադիոծրագրերի հեռարձակման պետական ցանցի 17 կայաններում:

Ազդանշանի հեռարձակումը կազմակերպվում է հեռահաղորդակցության վերերկրյա ուղիներով և արբանյակային ընդունմամբ:

Ռադիոհեռարձակմամբ բնակչության ընդգրկվածության ցուցանիշները բերված են աղյուսակ 9-ում:

14. Ծրագրի նպատակներն ու խնդիրները: Թվային եթերային ռադիոծրագրերի հեռարձակման ցանցի ներդրման հիմնական սկզբունքները

Թվային եթերային ռադիոծրագրերի հեռարձակման գնահատման առումով երկրի հեռարձակողների առջև դրվում են նույն խնդիրները, ինչ որ՝ ԹՀՏ հեռարձակման դեպքում:

Դա բնակչության առավել լիարժեք ընդգրկվածության ապահովումն է, ռադիոծրագրերի քանակի ավելացումը, որակի բարձրացումն ու լրացուցիչ ծառայությունների տրամադրումը:

Հայաստանի պայմաններում այս նպատակներին հասնելու, հաճախականությունների հատկացման միջազգային համաձայնեցումն ապահովելու և եվրոպական տեխնոլոգիաները առավել լայնորեն կիրառելու տեսանկյունից՝ անալոգայինից թվային ռադիոհեռարձակման անցնելիս նպատակահարմար է ներդնել S-ԴԱԲ (Դիջիթալ Աուդիո Բրոդքաստինգ) համակարգը:

15. Թվային ռադիոհեռարձակման ներդրման հիմնական առաջնահերթ միջոցառումները

Թվային ռադիոհեռարձակման ներդրման համար անհրաժեշտ պետական մակարդակի օրենսդրական-իրավական և կազմակերպական միջոցառումների դրույթները համանման են սույն Ծրագրի 5-րդ բաժնում և աղյուսակներ 1-ում և 2-ում շարադրվածին:

16. Թվային ռադիոհեռարձակման ցանցերի ստեղծումը S-ԴԱԲ ստանդարտում

Հեռահաղորդակցության վերերկրյա ուղիներով և արբանյակային ընդունմամբ հեռուստատեսային ծրագրերի հեռարձակման ցանցի արդիականացումը տեխնիկական հնարավորություն է ստեղծում նաև ռադիոծրագրերի հեռարձակման համար (կապուղիներն ապահովում են ինչպես հեռուստածրագրերի, այնպես էլ ռադիոծրագրերի հեռարձակումը):

Տվյալ դեպքում, վերերկրյա թվային ռադիոհեռարձակման համար առաջարկվում է անալոգային հաղորդակները փոխարինել թվայինով: Արբանյակային ընդունման դեպքում պահանջվում է 82 հատ ռադիոդեկոդերների (ռադիոկոդավերծանիչների) տեղակայում:

Կախված հաճախականության հատկացումներից՝ ռադիոհաղորդակների հզորությունների ընտրությունը և ընդգրկման գոտին կճշգրտվի թվային ռադիոհեռարձակման

զարգացման սխեմայի մշակման փուլում:

17. Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

Հայաստանի Հանրապետությունում թվային հեռարձակման ներդրման ֆինանսավորման աղբյուր կարող են հանդիսանալ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ռադիոընկերությունների ներդրումները: Ներդրողներից ֆինանսական միջոցներ ներգրավելու նպատակով անհրաժեշտ է գործի դնել ֆինանսական աջակցության անուղղակի մեխանիզմներ, ստեղծել բարենպաստ պայմաններ՝ վճարովի ներգործուն ծառայություններ մատուցող մասնավոր օպերատորների գործունեության համար: Տեխնիկական մեծ ներուժով օժտված, սակայն գործող օրենսդրության շրջանակներում կարգավորվող՝ ռադիոծրագրերի հեռարձակման պետական ցանցի օպերատորի տնտեսավարման ներկայիս ձևը էական զարգացման հնարավորություններ չի տալիս:

Հանրապետությունում թվային հեռարձակման ցանցի ստեղծման ֆինանսական գնահատականը բերված է աղյուսակներ 5-ում և 6-ում:

Աղյուսակ 5.

N	Միջոցառումների, աշխատանքների անվանումը	Ժամկետը	Ծախսերը, մլն. դրամ		
			պետական բյուջեի միջոցներ	ներգրավված միջոցներ	ընդամենը
1.	Հայաստանի Հանրապետությունում թվային ռադիոհեռարձակման զարգացման սխեմայի մշակում	2006-2007թթ	15.0	-	15.0
2.	82 ռադիոկայաններում ռադիոծրագրերի սոցիալական փաթեթի հեռարձակման համար համապատասխան հզորությամբ մեկական S-ԴԱԲ թվային ռադիոհաղորդակի և լրակազմի ձեռքբերում և տեղադրում, այդ թվում՝	2009-2015թթ	1 156.6	-	1 156.6
			35.7	-	35.7
			148.5	-	148.5
			558.0	-	558.0
			414.4	-	414.4
	2000 Վտ. 1 հատ				
	1000 Վտ. 5 հատ՝ յուրաքանչյուրը 29.7 մլն. դրամ				
	250 Վտ. 20 հատ՝ յուրաքանչյուրը 27.9 մլն.				

	դրամ 20 Վտ. 56 հատ` յուրաքանչյուրը 7.4 մլն. դրամ				
3.	Ուղիորդագրերի սոցիալական փաթեթի ընդունման համար Ս-ԳԱԲ ստանդարտի արբանյակային ընդունիչ համակարգերի ձեռքբերում և տեղադրում 66 կայաններում	2009-2015թթ.	20.8	-	20.8
4.	Մարզկենտրոններում, խոշոր բնակավայրերում լրացուցիչ մասնավոր ռադիոժրագրերի հեռարձակման համար համապատասխան հզորությամբ S-ԳԱԲ թվային հաղորդակների և լրակազմերի ձեռքբերում և տեղադրում, այդ թվում` 1000 Վտ. 5 հատ` յուրաքանչյուրը 29.7 մլն. դրամ 250 Վտ. 11 հատ` յուրաքանչյուրը 27.9 մլն. դրամ	2013-2015թթ.	-	455.4	455.4
			-	148.5	148.5
			-	306.9	306.9
ԸՆԴԱՍԵՆԸ 2007-2015 թթ-ին`				1 647.8 մլն. դրամ	
այդ թվում` բյուջետային ֆինանսավորում`				1 192.4 մլն. դրամ	
ներգրավված միջոցներ`				455.4 մլն. դրամ	

Աղյուսակ 6.

N	Աշխատանքների իրականացման փուլը	Ժամկետը	Ծախսերը, մլն. դրամ		
			ընդամենը	պետր-յուջեի միջոցներ	ներգրավված միջոցներ
Նախապատրաստական փուլ		2006-2007թթ.	15.0	15.0	-
1.	Հայաստանի Հանրապետությունում թվային ռադիոհեռարձակման զարգացման սխեմայի մշակում		15.0	15.0	-

1-ին փուլ		2009-2010թթ.	35.7	35.7	-
2.	Ուսղիծորագրերի սոցիալական փաթեթի հեռարձակման համար 2000 Վտ հզորությամբ S-ԴԱԲ թվային ռադիոհաղորդակի և լրակազմի ձեռքբերում և տեղադրում Երևանում		35.7	35.7	-
2-րդ փուլ		2011-2012թթ.	709.7	709.7	-
3.	25 կայաններում ռադիոծրագրերի սոցիալական փաթեթի հեռարձակման համար 250-1000Վտ հզորությամբ մեկական S-ԴԱԲ թվային ռադիոհաղորդակների և լրակազմերիի ձեռքբերում և տեղադրում		706.5	706.5	-
4.	10 հանգուցային կայաններում ռադիոծրագրերի սոցիալական փաթեթի ընդունման համար ԴՎԲ-Ս արբանյակային ընդունիչ համակարգերի ձեռքբերում և տեղադրում		3.2	3.2	-
3-րդ փուլ		2013-2015թթ.	887.4	432.0	455.4
5.	56 կայաններում ռադիոծրագրերի սոցիալական փաթեթի հեռարձակման համար 20Վտ հզորությամբ մեկական S-ԴԱԲ թվային ռադիոհաղորդակների և լրակազմերիի ձեռքբերում և տեղադրում		414.4	414.4	-
6.	56 կայաններում ռադիոծրագրերի սոցիալական փաթեթի ընդունման համար ԴՎԲ-Ս արբանյակային ընդունիչ համակարգերի ձեռքբերում և տեղադրում		17.6	17.6	-
7.	Մարզկենտրոններում, խոշոր բնակավայրերում լրացուցիչ մասնավոր ռադիոծրագրերի հեռարձակման համար համապատասխան հզորությամբ S-ԴԱԲ թվային հաղորդակների և լրակազմերի ձեռքբերում և, տեղադրում		455.4	-	455.4

Վիճակագրական տվյալներ

ըստ հեռուստաձրագրերի հանրապետության բնակավայրերի և բնակչության ընդգրկվածության 2006 թվականի հունվարի 1-ի դրությամբ

Հ/հ	Հեռուստաձրագրի անվանումը	Ընդհանուր ընդգրկվածությունը, %		Քաղաքային, %		Գյուղական, %	
		բնակավայր	բնակչություն	բնակավայր	բնակչություն	բնակավայր	բնակչություն
1.	Հ1	100	99.8	100	99.9	100	99.7
2.	h2	74.8	93.8	93.7	98.5	73.9	85.6
3.	«Էռ Տե Էռ -Պլանետա»	76.5	93.2	93.7	98.7	75.6	85.3
4.	1-ին ռուսական ծրագիր	57.5	87.9	75.0	94.2	56.6	76.8
5.	ԱԼՄ	43.5	69.5	56.3	80.0	41.8	59.3
6.	Արմենիա	42.5	68.9	62.5	88.5	39.3	53.6
7.	Շանթ	32.4	59.1	35.4	76.9	31.2	42.3
8.	Նոր Ալիք	30.2	53.5	29.1	70.3	29.4	41.8
9.	ԱԲ	24.8	49.3	20.8	61.9	25.0	39.3
10.	տեղական (մարզային) ծրագրեր	11.0	59.8	50.0	88.7	9.2	9.4

Առանձին դեպքերում բնակչության մոտ ժամանակակից հեռուստացույցների և համապատասխան ընդունիչ ալեհավաքների բացակայության պատճառով հեռուստաձրագրերը ընդունվում են նորմերից ցածր:

Վիճակագրական տվյալներ

հանրապետության բնակավայրերի և բնակչության ընդգրկվածության 2006թվականի հունվարի 1-ի դրությամբ

Հ/հ	Հեռուստածրագրերի քանակը	Ընդհանուր ընդգրկվածությունը, %		Քաղաքային, %		Գյուղական, %	
		բնակավայր	բնակչություն	բնակավայր	բնակչություն	բնակավայր	բնակչություն
1.	1 և ավելի (հավելված 5)	100	99.8	100	99.9	100	99.7
2.	2 և ավելի (հավելված 6)	87.2	97.4	100	99.9	86.5	92.8
3.	3 և ավելի (հավելված 7)	78.0	95.1	91.7	99.5	77.5	87.3
4.	4 և ավելի (հավելված 8)	59.1	88.4	83.3	96.3	57.8	74.8
5.	5 և ավելի (հավելված 9)	52.0	85.8	72.9	94.6	50.9	70.9
Առանձին դեպքերում բնակչության մոտ ժամանակակից հեռուստացույցների և համապատասխան ընդունիչ ալեհավաքների բացակայության պատճառով հեռուստածրագրերը ընդունվում են նորմերից ցածր							

Վիճակագրական տվյալներ

հանրապետության բնակավայրերի և բնակչության ընդգրկվածության
2006թվականի հունվարի 1-ի դրությամբ

Ռադիոձրագրերի քանակը (միայն ԳԿԱ (FM) տիրույթում հանրապետության բնակավայրերի և բնակչության ընդգրկվածության տվյալները)	Բնակավայր %	Բնակչություն %
1 և ավելի	72.9	92.0
2 և ավելի	55.8	79.5
3 և ավելի	32.1	67.3

Վիճակագրական տվյալներ

ըստ մարզերի բնակավայրերի և բնակչության ընդգրկվածության

1 ծրագիր և ավելի

Մարզի անվանումը	Բնակավայրեր, %			Բնակչություն, %		
	ընդամենը	այդ թվում		ընդամենը	այդ թվում	
		քաղաքային	գյուղական		քաղաքային	գյուղական
Ընդամենը չհիշում	100	100	100	99.8	99.9	99.7
Արագածոտն	100	100	100	99.3	99.7	99.2
Արարատ	100	100	100	99.9	99.9	99.9
Արմավիր	100	100	100	99.9	99.9	99.9
Կոտայք	100	100	100	99.8	99.9	99.8
Շիրակ	100	100	100	99.7	99.9	99.4
Գեղարքունիք	100	100	100	99.8	99.9	99.8
Լոռի	100	100	100	99.9	99.9	99.9
Տավուշ	100	100	100	99.8	99.9	99.7
Վայոց Ձոր	100	100	100	98.2	98.5	98.0
Սյունիք	100	100	100	99.4	99.7	98.5
Երևան	100	100	100	99.9	99.9	-

Վիճակագրական տվյալներ

ըստ մարզերի բնակավայրերի և բնակչության ընդգրկվածության

2 ծրագիր և ավելի

Մարզի անվանումը	Բնակավայրեր, %			Բնակչություն, %		
	ընդամենը	այդ թվում		ընդամենը	այդ թվում	
		քաղաքային	գյուղական		քաղաքային	գյուղական
Ընդամենը չհասնող	87.2	100	86.5	97.4	99.9	92.8
Արագածոտն	95.8	100	95.7	95.8	99.7	94.5
Արարատ	100	100	100	99.9	99.9	99.9
Արմավիր	100	100	100	99.9	99.9	99.9
Կոտայք	97.1	100	96.8	99.7	99.9	99.7
Շիրակ	89.3	100	89.0	95.8	99.9	89.1
Գեղարքունիք	92.9	100	92.5	96.7	99.9	95.0
Լոռի	79.8	100	78.5	95.5	99.9	89.0
Տավուշ	84.6	100	83.6	91.6	99.9	86.6
Վայոց Ձոր	66.7	100	64.8	83.0	98.5	74.7
Սյունիք	66.0	100	64.0	86.5	99.7	58.0
Երևան	100	100	-	99.9	99.9	-

Վիճակագրական տվյալներ

ըստ մարզերի բնակավայրերի և բնակչության ընդգրկվածության

3 ծրագիր և ավելի

Մարզի անվանումը	Բնակավայրեր, %			Բնակչություն, %		
	ընդամենը	այդ թվում		ընդամենը	այդ թվում	
		քաղաքային	գյուղական		քաղաքային	գյուղական
Ընդամենը ՀՀ-ում	78.0	91.7	77.5	95.1	99.5	87.3
Արագածոտն	95.8	100	95.7	95.8	99.7	94.5
Արարատ	99.0	100	98.9	99.5	99.9	99.3
Արմավիր	98.0	100	97.9	99.4	99.9	99.1
Կոտայք	92.9	100	92.0	96.3	99.9	91.5
Շիրակ	86.3	100	85.9	95.5	99.9	88.4
Գեղարքունիք	77.6	100	76.3	91.3	99.9	87.0
Լոռի	64.3	62.5	64.5	88.2	96.9	75.4
Տավուշ	75.4	100	73.8	84.8	99.9	75.6
Վայոց Ձոր	52.6	100	50.0	72.4	98.5	58.3
Սյունիք	40.9	85.7	37.6	78.0	95.1	41.4
Երևան	100	100	-	99.9	99.9	-

Վիճակագրական տվյալներ

ըստ մարզերի բնակավայրերի և բնակչության ընդգրկվածության

4 ծրագիր և ավելի

Մարզի անվանումը	Բնակավայրեր, %			Բակչություն, %		
	ընդամենը	այդ թվում		ընդամենը	այդ թվում	
		քաղաքային	գյուղական		քաղաքային	գյուղական
Ընդամենը չէ- րաբ	59.1	83.3	57.8	88.4	96.3	74.8
Արագածոտն	78.3	66.7	78.6	68.6	36.9	78.3
Արարատ	88.8	100	88.3	97.4	99.9	96.4
Արմավիր	98.0	100	97.9	99.4	99.9	99.1
Կոտայք	78.6	85.7	77.8	83.2	83.7	82.4
Շիրակ	54.2	100	53.1	90.5	99.9	75.5
Գեղարքունիք	50.0	80.0	48.4	78.6	83.9	76.0
Լոռի	38.8	62.5	37.2	75.7	96.9	44.6
Տավուշ	23.0	75.0	19.7	49.0	82.5	28.7
Վայոց Ձոր	38.6	100	35.2	61.8	98.5	42.0
Սյունիք	34.8	85.7	32.0	76.3	95.1	35.8
Երևան	100	100	-	99.9	99.9	-

Վիճակագրական տվյալներ

ըստ մարզերի բնակավայրերի և բնակչության ընդգրկվածության

5 ծրագիր և ավելի

Մարզի անվանումը	Բնակավայրեր, %			Բնակչություն, %		
	ընդամենը	այդ թվում		ընդամենը	այդ թվում	
		քաղաքային	գյուղական		քաղաքային	գյուղական
Ընդամենը չհաս	52.0	72.9	50.9	85.8	94.6	70.9
Արագածոտն	35.0	0	64.1	32.9	0	43.2
Արարատ	88.8	100	88.3	97.4	99.9	96.4
Արմավիր	98.0	100	97.9	99.4	99.9	99.1
Կոտայք	75.7	85.7	74.6	81.8	83.7	79.3
Շիրակ	51.9	100	50.8	89.9	99.9	74.0
Գեղարքունիք	48.0	60.0	47.3	75.5	75.7	75.4
Լոռի	38.8	62.5	37.2	75.7	96.9	44.6
Տավուշ	23.0	75.0	19.7	49.0	82.5	28.7
Վայոց Ձոր	24.6	66.7	22.2	48.3	67.7	37.9
Սյունիք	32.6	71.4	30.4	70.3	87.0	34.4
Երևան	100	100	-	99.9	99.9	-

Լավ և հանգամանալի վիճակագրություն է, քայք այդքան էլ պարզ չէ թվային միացման ծրագիրը և թե ինչպես է այն համապատասխանելու այս իրականության հետ:

IV. Ծրագրում օգտագործվող հապավումները

18. Մույն ծրագրում օգտագործվող հապավումներն են՝

- ա) ԹՀՏ - թվային հեռուստատեսություն,
- բ) ՄԵՀՏ - մալուխա-եթերային հեռուստատեսություն,
- գ) բազմախանալային (MMDS - Multichannel Microwave Distribution Sistem),
- դ) թվային տեսա (DVB - Digital Video Brodcasting),
- ե) (DVB-T - Digital Video Brodcasting),
- զ) (DVB-S - Digital Video Brodcasting),
- է) (DVB-C - Digital Video Brodcasting),
- ը) (DVB-H - Digital Video Brodcasting),
- թ) (T-DAB - Digital Audio Brodcasting)
- ժ)
- ժա)
- ժբ) ՌՌԳ - ռադիոռելեային գծեր,
- ժգ) ՕՍՄԳ - օպտիկա-մանրաթելային մալուխային գծեր

Հավելված 2

Համապատասխան նյութերի ընտրությունը

Եվրոպայի Խորհուրդ

Եվրոպայի Խորհրդի նախարարների հանձնաժողովի հանրային ծառայության հեռարձակման անկախության երաշխիքների վերաբերյալ հանձնարարականը R (96)10 անդամ պետություններին:

Եվրոպայի Խորհրդի նախարարների հանձնաժողովի ՁԼՄ-ների տարակարծության վերաբերյալ հանձնարարականը R (99)1 անդամ պետություններին:

Եվրոպայի Խորհրդի նախարարների հանձնաժողովի թվային հեռարձակման ժողովրդավարական և սոցիալական աջակցմանը խթանող միջոցառումների վերաբերյալ R (2003)9 անդամ պետություններին:

Անդրսահմանային հեռուստատեսության մասին Եվրոպական կոնվենցիան, մայիս 5 1989թ.

Եվրոպական Միություն

Դիրեկտիվա 2002/19/EC, մատչելիության դիրեկտիվա

Դիրեկտիվա 2002/20/EC, լիազորման դիրեկտիվա

Դիրեկտիվա 2002/21/EC, շրջանակային դիրեկտիվա

Դիրեկտիվա 2002/22/EC, հանրնդիանուր ծառայության դիրեկտիվա

Դիրեկտիվա 2002/77/EC էլեկտրոնային հաղորդակցման ցանցերի և ծառայությունների շուկաներում մրցակցության մասին

Հանձնաժողովի հաղորդագրությունը Խորհրդին, Եվրոպական Խորհրդարանին, Եվրոպական տնտեսական և սոցիալական հանձնաժողովին ու Տարածաշրջանների հանձնաժողովին՝ անալոգայինից թվային հեռարձակում անցումն արագացնելու մասին, COM(2005)204 վերջնական, Բրյուսել 24.5.2005:

Հանձնաժողովի հաղորդագրությունը Խորհրդին, Եվրոպական Խորհրդարանին, Եվրոպական տնտեսական և սոցիալական հանձնաժողովին ու Տարածաշրջանների հանձնաժողովին՝ անալոգայինից թվային հեռարձակման անցման մասին, (թվային «անցումից» անալոգային «անջատում»), COM(2003)541 վերջնական, Բրյուսել 17.9.2003.

Եվրոպական հեռարձակման միություն

ԵՀՄ օնլայն նորությունների հեռարձակում 2003/4

Թվային ինտերակտիվ հեռուստատեսային ծառայությունների համադրելիության մասին հանձնաժողովի աշխատակազմի աշխատանքային փաստաթղթի վերաբերյալ ԵՀՄ մեկնաբանությունները, ապրիլ 30 2004թ.

ԵԱՀԿ

Մանուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ Միկլոշ Հարաշտի. «ՁԼՄ-ների ազատության իրավիճակը Հայաստանում»: Դիտարկումներ և հանձնարարականներ, հուլիս 26, 2006թ.

ԵԱՀԿ Եվրոպական ռադիոհաղորդակցության գրասենյակի հետ միասին «Մեկնաբանություններ Ալբանիայի Հանրապետությունում թվային հեռարձակման զարգացման ռազմավարության մասին», սեպտեմբեր 21, 2004թ.

Այլ

Նատալի Զելբերգեր «Տեխնիկական բարդությունների մտաչելիությունը. եվրոպական նոր մոտեցումը» *Հաղորդակցություններ և ռազմավարություններ* 2002-2, էջ 33:

Նատալի Զելբերգեր «Բովանդակության մատչելիության վերահսկումը – պայմանական մատչելիության կարգավորումը թվային հեռարձակման մեջ», *Տեղեկատվական իրավունքի շարք* 15, Հաագա, Կուլվերի միջազգային իրավունք (2005թ.):

Եվա Սալմոն «Հեռարձակման կարգավորման ուղեցույցներ», UNESCO և Համադաշնության հեռարձակման ընկերակցություն (2006թ.):

Տեղեկատվական հասարակության համաշխարհային գագաթնաժողովի UNESCO աշխատաժողով, Ժնև, դեկտեմբեր 2003թ.

Թվային հեռուստատեսության ներդրման Լիտվայի կառավարության մոդելը, 2004թ.
<http://merlin.obs.coe.int>.

Յունգարիայի «Թվային հեռարձակման փոխանցման կանոնների մասին օրենքի» նախագիծ, հունվար 2006թ., <http://merlin.obs.coe.int>.

Ցամաքային հեռուստատեսության անալոգայինից թվային տեխնոլոգիայի անցման Լեհաստանի նախարարների խորհրդի ռազմավարությունը, մայիս 4, 2005,
<http://merlin.obs.coe.int>:

www.cept.org

www.epra.org

www.digitaltelevision.gov.uk

www.ofcom.org.uk

www.digitv.fi

www.digitv.ee

www.digitaltvovergangen.se